

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԻ ԱՄԵՆՈՒՆ ԳԱՄԱԿ
 "PANPÈRE"
 REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
 ORGANE DES ÉGLISES ÉVANGÉLIQUES ARMÉNIENNES DE FRANCE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Rédaction et Administration :
 7, Rue Papère — MARSEILLE

ԺԱ. Տարի - ԾԳՈՍՏՈՍ 1935



11^{me} Année - Août 1935



Խմբագրական

Սուրբ Գեորգ

Գ. Գ. Խ.

Հոգ. Կեանք

Տեսնել

Սուրբ Օգոստինոսի խոստովանութիւնները

Թ. Ա. Սփարբո
 Զ. Բ. Պոլտաբեան

Կենաց ածուկներէն

Ժուլիէն Բէնֆրոի յայտարարութիւնը

Կ. Ե. Պ.

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Կենսագրական


Ճան Ուէսլի

Վ. Ս.

Մանկանց սիւնակ

Զիւնէն աւելի ճերմակ

Թարգ. Պզտիկներու բարեկամուհին



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Տշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կըզգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բոլորի Տշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտիի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
դիւրութիւն կուտայ որ թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՅ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 25 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ զրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Ֆրանսայի դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Արմենցի'ր դուն
որ կը քնանաս, ես
կանգնեմ մեռելնե-
րէն, ու Գրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. ե. 14

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է'
պիտի գայ ու պի-
տի բուշանայ:

Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մտնելու խոստումնքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

ԺԱ. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ 1955

ԹԻԻ 8

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԳԵՏԸ

ԵԶԵԿ. ԽԷ. 1-12

Այս համարներուն վսեմ մարգարէութիւնը իր բառական նշանակութեամբ պիտի կատարուի Հազարամեային: Այդ ժամանակ Պաղեստինը երկրաբանական մասնաւոր փոփոխութիւններու պիտի ենթարկուի: Տաճարին տակէն աղբիւր մը հետզհետէ առատանալով մեծ գետ մը պիտի դառնայ և պիտի ոռոգէ Երուսաղէմի արևելեան և Յորդանանու արևմտեան կողմը տարածուած խնրերի տափաստանը եւ զայն պտղաբեր դաշտի մը պիտի վերածէ: Այն ատեն տառական իմաստով «Անապատն ու չոր երկիրը պիտի ուրախանայ... ու շուշանի պէս պիտի ծաղկի... Անոր պիտի տրուի Լիբանանի փառքը, Կարմեղոսի ու Սաբոնի վայելչութիւնը»: Տէրը իր խոստման համաձայն «չոր երկիրը շուրի աղբիւրներու պիտի դարձնէ և անապատին մէջ եղելին, սատիւ, մըրտենի եւ իւղի ծառ պիտի տնկէ» (Եսայ. ԼԵ. 1, 2, 7: ԽԱ. 18, 19): Եւ գետին մէկ կողմէն ու միւս կողմէն ամէն տեսակ պտղաբեր ծառեր պիտի բուսնին, որոնց տերեւը պիտի չթառամի եւ պըտուող պիտի չհատնի, ամէն ամիս նոր պտուղ պիտի տան:

Դեռ աւելին կայ: Այդ Սուրբ գետը Մեռեալ ծովուն մէջ պիտի հոսի եւ անոր միջոցաւ բժշկութիւն պիտի զտնեն անոր թունաւոր ու մահառիթ շուրերը: Հոն, ուր այսօր ոեւէ կենդանի չը կրնար ապրիլ, Հազարամեային բազմաթիւ ջրային կենդանիներ պիտի լողան: Մեռեալ ծովուն եզերքէն՝ «Ենզաղզիէ մինչեւ Ենազլայիմ ձկնորսներ պիտի կայնին, հոն ուռկաններ փռելու տեղ պիտի ըլլայ, ձուկերը տեսակ տեսակ պիտի ըլլան, մեծ ձուկուն ձուկերուն պէս խիստ շատ պիտի ըլլան» (Եզեկ. ԽԷ. 6-12):

Սակայն ան ունի նաեւ հոգեւոր իմաստ եւ

այդ իմաստով կատարուեցաւ նախ Պենտեկոստէին, երբ իրականացաւ Յիսուսի սա խօսքը, «Եթէ մէկը ծարաւ է, թող Ինծի գայ ու խմէ: Ան որ Ինծի կը հաւատայ... անոր փորէն կենդանի ջուրի գետեր պիտի բխեն» (Յովհ. Է. 37, 38):

Այդ օրերուն կենդանի ջուրի գետը հոսեցաւ Յիսուսի աշակերտներուն մէջ, զանոնք վերածեց զալարազեղ ծառերու եւ անոնց մէջ արտադրեց իր ալլազան քաղցրահամ պտուղները, «Սէր, խնդութիւն, խաղաղութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեղութիւն, ժուժկալութիւն» (Գաղ. Ե. 22, 23): Ապա այդ գետը առաքեալներու գործունէութեան շնորհիւ ոռոգեց ամբողջ Պաղեստինը եւ հոն բազմաթիւ սրտեր, որոնք անբերրի անապատներու վերածուած էին՝ փարիսեցիական աւանդամոլութեան, կեղծաւորութեան ու եսասիրութեան պատճառաւ, շուշանի պէս ծաղկեցուց:

Յետոյ Սուրբ գետը յորդեց ու հոսեցաւ նաեւ դէպի Անտիոք, Եփեսոս, Թեսաղոնիկէ, Աթէնք, Կորնթոս, Հռոմ եւ Աղեքսանդրիա եւն, որոնք թէեւ մէկ կողմէն իմացական բարձրագոյն դաստիարակութեան վառարաններ կը հանդիսանային, միւս կողմէ սակայն ապականութեան վայրեր էին, Մեռեալ ծովեր, ուր թունաւորուած ու մեռած էր բարոյական կեանքը: Կինը ու անոր հետ միասին ընտանեկան կեանքը ստորնացած էին: Ժողովուրդին մէկ մասը կոյր ու տղայական նախաւաշարումներու, իսկ միւս լուսամիտ նկատուածը՝ կազմալուծող սկեպտիկութեան տակ անյոյս ու աննպատակ կեանք մը կը քաշքշէր: Մէկ մասը ֆիզիքական՝ եւ գրեթէ ամբողջ մեղքի գերութեան շղթաներուն տակ կը հեծեծէր: Զգայական հաճոյքներու թուլամորթ անձնատըւութիւնը և ասպերատան անձնասիրութիւնը ստեղ-

ծած էին նեխած մթնոլորտ մը, ուր չէր կարող զոյուլթիւն ունենալ ռեւէ բարոյական եւ հոգեւոր կեանք: Ի տես այդ անկման, Պօղոս իրաւունք ունէր ըսելու, «Յանցանքներու եւ մեղքերու մէջ մեռած էիք»:

Սակայն հոսեցան Պօղոսի, Շիղայի, Տիմոթէոսի եւ ապա Պետրոսի ու Յովհաննէսի «փորէն կենդանի ջուրի գետերը» եւ ահա կատարուեցաւ մեծ հրաշքը, — բուժուեցան այդ մեռեալ ծովերու ջրերը եւ հոգեւոր կեանքի եռուզեռը սկսաւ անոնց մէջ: Անոնց ամենուն մէջ ալ ծնունդ առաւ եկեղեցին, որուն հետեւողներուն համար կեանքը այլեւս տաղտկալի, աննպասակ քաշքշուք մը չէր եւ ոչ ալ առիթ մը անասնական կիրքերու յագեցման, հապա վսեմ, ուրախառիթ պատեհութիւն մը՝ սիրոյ ու սրբութեան գործերու: Գերեզմանը այլեւս մութ, սարսափազդու փոս մը չէր, հապա կամուրջ մը դէպի լուսաշող յաւիտենական կեանքը: Աստուած այլեւս անձանօթ, ճակատագրային ուժ մը չէր, հապա սիրագեղ չայր հաւատացեալին: Ծնունդ առաւ նաեւ քրիստոնեայ ընտանիքը, ուր սկսաւ մտերիմ, սիրալից յարաբերութիւն մը տիրել երկու ամուսիններու, ծնողաց ու զաւակներու եւ նոյնիսկ տիրոջ ու գերիին միջեւ: Կինը այլեւս առարկան չէր էրկանը քմահաճոյքին՝ հապա ճշմարիտ մայրը ու դաստիարակը իր զաւակաց ու զօրաւոր նեցուկը իր ամուսնոյն՝ զայն խրախուսելու համար դէպի անկեղծ աստուածապաշտութիւն ու դէպի գութ եւ ուրիշ քրիստոնէական առաքինութիւններ:

Ուրկէ՞ այս փոփոխութիւնը: Ինչպէ՞ս ծնաւ հաւատոյ, յուսոյ, սրբութեան ու սիրոյ երկնաւազ կեանքը՝ նախապաշարումով, անհաւատութիւնով, անձնասիրութիւնով ու երկրաքարշ կիրքերով թունաւորուած այդ Մեռեալ ծովերուն մէջ: Մէկ պատասխան միայն կայ — Սուրբ գետը հոսած էր անոնց մէջ եւ բուժած անոնց մահառիթ ջուրերը:

Պենտեկոստէէն մինչեւ մեր օրերը այդ Սուրբ գետը հոսած է նաեւ ուրիշ բազմաթիւ երկիրներու մէջ, ուր բուժած է ու ձուկերով լեցուցած է շատ մը Մեռեալ ծովեր, եւ ծաղկեցուցած ու արգասաբեր դաշտերու վերածած է շատ մը անապատներ:

Ան ոռոգած է նաեւ մեր փոքր ու սիրելի Հայաստանը: Հոն ալ Հայ առաքելական եկեղեցւոյ ներկայացուցիչներու — Գրիգոր Լուսաւորիչի, Ներսէս Պարթևի, Սահակի ու Մեսրոպի, Գրիգոր Նարեկացիի եւ Ներսէս Շնորհալիի նման հաւա-

տացեալներու մէջէն «հոսած են կենդանի ջրի գետերը եւ կեանք արտադրած մեր երկրի հոգեւոր անապատին մէջ: Դեռ անցեալ դարու վերջին կիսուն՝ սուրբ ջրերը հոսեցան նաեւ Հայ Աւետարանական եկեղեցւոյ ծոցէն եւ շատ մը անբերրի տեղերու մէջ ծլեցուցին ու ծաղկեցուցին հազարաւոր ծառեր, որոնք իրենց տեսակ տեսակ քաղցրահամ պտուղներով ուրախացուցին իրենց Փրկիչն ու շրջապատի մարդիկը: Նոյնիսկ զրացի մուհամեաականներ նշմարեցին այդ սուրբ ջրերուն ներկայութիւնը. — թիւրք դատաւորները հայ բողոքականի մը մէկ պարզ խօսքին աւելի կը վստահէին, քան թէ ուրիշներու տառնեակ մը երգումներուն:

Բայց աւա՛ղ, այդ ատեն սուրբ ջուրերը ծանծաղ մնացին, հազիւ մարդուն ծունկերը հասան, ուստի չկրցին մինչեւ Մեռեալ ծովը իջնել ու բուժել անոր թունաւոր ջրերը: Աւա՛ղ, հայ աւետ. եկեղեցւոյն պալկսեցան Քրիստոսի հաւատքովը լեցուած այնպիսի զօրաւոր ծառաներ, որոնց «փորէն» Տէրը հաճէր «կենդանի ջրի գետերը լիսեցնել եւ ոռոգել ու ծաղկեցնել անապատը: Գաղտնի՞քը. — Արդիապաշտութիւն, անտարբերութիւն, թերահաւատութիւն ու աշխարհսիրութիւն մտան հովիւներէն ու անդամներէն շատերուն մէջ ու մարեցին սկզբնական աւիւնը, յառաջին սէրը», արգիւնցին սուրբ ջրերու առատ յորդումը:

Հոգեւոր այդ թմրութեան մէջէն ծնան «Հոգեւոր եղբայրութիւն»ները, որոնք սկսան պայքարիլ վերոյիշեալ մեղքերուն դէմ եւ ջանացին կազմել այնպիսի քրիստոնէական միութիւն մը որուն անդամներուն մէջ տիրէր Սուրբ զրական զաւանանք, անձնական փորձառութեան վրայ հիմնուած կենդանի հաւատք եւ քրիստոնէական սուրբ կեանք: Եւ առաջին տարիներուն Աստուած օրհնեց իրենց ջանքերը, հոս ու հոն յառաջ եկաւ արթնութիւն, սկսան հոսիլ սուրբ ջրերը: Բայց հազիւ թէ անոնք մինչեւ մարդուն գարշապարը բարձրացած էին, ահա Քրիստոսի դարաւոր թշնամին, Սատանայ, եղբայրութեանց մէջ ալ սպրդեցուց ի հնուց ծանօթ հոգեւոր հրպարտութեան, քննադատութեան ու բաժանումներու ոգին եւ արգելք եղաւ սուրբ ջրերու առատանալուն:

Շիտակ է. անոնք այսօր ալ ցամքած չեն եւ հոս ու հոն ճշմարիտ ուրախալի առուներ կը հոսին, աս կամ ան դաւանանքը ունեցող եկեղեցիներէն ոմանց մէջ, բայց միայն իբր վտիտ առուներ, որոնք հազիւ կարող են իրենց պար-

տէգները ոռոգել եւ հոն փթթեցնել տասնեակ մը անուշաբոյր ծաղիկներ եւ քանի մը պտղատու ծառեր, մինչդեռ անդին անապատը — հոգեւոր չորութիւնը, և Մեռեալ ծովը՝ բարոյական ապականութիւնը — օրէ օր աւելի կ'ընդաւթնակեն իրենց սահմանները:

Այս պայմաններուն տակ մո'ւթ է, ահաբեկ է մեր ազգի հոգեւոր կեանքի ապագան: Բայց Աստուած «ողորմած ու զթած, երկայնամիտ ու բազումադոյրմ է» եւ կարող առատացնելու սուրբ ջրերը: Միայն թէ կը սպասէ որ պատրաստուին նաեւ եղբայրութիւնները, լուսաւորչական ու բողոքական բոլոր ճշմարիտ հաւատացեալները: Կը սպասէ որ անոնք խոստովանին իրենց ու իրենց եկեղեցիներու սեփական յանցանքներն ու մեղքերը՝ խոր զղջումով, «ծոմապահութեամբ, լալով ու սգալով» եւ իրենց «սրտերը պատռելով»: Կը սպասէ որ Իր «պաշտօնը կատարող քահանաները սրահին ու սեղանին մէջտեղը լան» Յովել Բ. 12-32:

Այսպէս ըրին առաքեալները Համբարձումէն մինչեւ Պենտեկոստէ: Անոնք այդ տասը օրուան միջոցին աղօթեցին՝ զղջման արցունք թափելով Յիսուսի դէմ գործած իրենց ու իրենց ազգին մեղքերուն համար: Եւ Աստուած լսեց անոնց խնդիրքը, զրկեց օրհնութեան անձրեւը:

Այսպէս ըրին Աստուծոյ զաւակները անցեալ դարու մեծ արթնութիւններու ատեն: Անոնք խոնարհեցան ու ապաշխարեցին իրենց ու իրենց եկեղեցիներու մեղքերուն համար: Վերջերս ուսումնասիրեցի արթնութեան մեծ, առաքելատիպ աւետարանիչը, Ֆինի, որու «փորէն ալ կենդանի շուրի գետեր բղխած» են ու շատ անապատներ ոռոգած և 10 000 աւոր անձեր դալարագեղ ու պտղատու ծառերու վերածած են: Արդ՝ այդ Աստուծոյ մարդը անձամբ կը խոստովանի թէ զբրեթէ ամէն տեղ, ուր Իր խօսքը օրհնուած է ու արթնութիւն յառաջ բերած, գտնուած են Աստուծոյ պատուոյն նախանձախնդիր, անդարձ հոգիներու համար ցաւ քաշող հաւատացեալներ, որոնք ցորեկ ու գիշեր աղօթք ըրած են: Կին մը առանց ուտելու եւ քնանալու երկու լման օր աղօթած է, որպէսզի Տէրը իրենց քաղաքին արթնութիւն շնորհէ: Եւ լսուած է իր խնդիրքը, իր հայրենիքին մէջ հարիւրաւոր անձինք դարձի եկած են Ֆինիի ժողովներու ատեն:

Տէրը մեզի ալ պիտի արցելէ Իր Հոգւոյն անձրեւովը, եթէ մեր մէջ ալ գտնէ փոքր խումբ մը, որոնք այդ կնոջ հոգին կը կրեն: Դուն չե՞ս ուզեր այդ անձերէն մէկը ըլլալ: Գ. Գ. Խ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՏԵՄՆԵԼ

○○○ — ○○○○

Առակ. Իթ. 18: Ա. Թագ. Գ. 1:

Չաք. Դ. 2: Գործք. ԻԶ. 17 - 19:

Վերի համարները հասարակաց բան մը ունին. անոնք բոլորն ալ այս կամ այն ձևին տակ տեսիլքի գաղափարը կը պարունակեն:

Եթէ ինծի հարցնեն թէ ներկայիս Աստուծոյ ժողովուրդը ամենէն շատ ի՞նչ բանի պէտք ունի, ի՞նչն է որ անոր համար մահու եւ կենաց խնդիր մը կը ներկայացնէ, ես պիտի չվարանէի պատասխանելու: Մեր ամենէն հրամայական պահանջը այն է որ Աստուած մեզի օգնէ մեր հոգեւոր տեսիլքին մէջ, որպէսզի կարենանք տեսնել ինչ որ ինք կը տեսնէ:

Այսօր Աստուծոյ զաւակներէն շատեր կը գտնուին այն վիճակին մէջ, ուր Իսրայէլի ժողովուրդը կը գտնուէր Ա. Թագ. Գ. 1 եւ այն օրերը ...յայտնի տեսիլք չկար, ուրիշ խօսքով հոգեւոր յայտնութիւն չկար Աստուծոյ ժողովուրդին մէջ:

Հաւատքի այս քոյրերուն եւ եղբայրներուն համար հետեւանք կ'ըլլայ հոգեւորապէս անօգուտ վիճակ մը. անոնց վկայութիւնը կը մնայ անազդեցիկ եւ անպտուղ:

Տեսիլքի գաղափարը երկու տեսակ կրնայ սահմանուիլ: Տեսիլք կը նշանակէ՝

1. Բան մը որ մէկը կը տեսնէ:

2. Այդ բանը տեսնելու կարողութիւն:

Գաղափարներու այս շարքով Պօղոս առաքեալ զրկուած է

ա) Հոգեւոր կոյրերուն աչքերը բանալու,

բ) Այս բացուած աչքերուն Տէր Յիսուսը ներկայացնելու:

Նոր կտակարանին մէջ մեզի ներկայացուած քրիստոնէական կեանքին համար կրնանք ըսել թէ՝ անիկա վերջապէս տեսիլքի մը արդիւնք է: Աստուածաշնչական բառերով տեսիլքը յաճախ կոչուած է յայտնութիւն: Ս. Գրոց մէջ քրիստոնէական կեանքը մեզի ի՞նչ ձևի տակ ալ որ ներկայանայ, ան մեզ անուղղակի կամ ուղղակի կերպով յարաբերութեան մէջ կը դնէ տեսիլքի մը կամ յայտնութեան մը հարցին հետ:

Փրկութիւնը յայտնութեան խնդիր մըն է: Յիսուս Քրիստոսն է որ պահուած եւ անծանօթ վիճակէ մը յանկարծ կը քօղազերծուի եւ կը յայտնուի մարդուն: Փրկուած ըլլալ կը նշանակէ կա-

ընդհանուր տեսանկյունից թէ՛ ո՛վ է Տէր Յիսուս եւ ի՞նչ ըրած է: Այս բաները լսել եւ անոնց հաւատալ բաւական չէ, ինչպէս որ մէկը հաւատք կ'ընծայէ որեւէ յայտարարութեան. զանոնք սրտի աչքերով տեսնել պէտք է: Եւ սրտի աչքերով տեսնել չի նշանակեր՝ պարզապէս ընդունիլ ճշմարտութեան դրութիւն մը որուն մէջ զլխաւոր դերը կը կատարէ Յիսուս Քրիստոս: Իսկական փրկութիւնը Տէր Յիսուս Քրիստոսի յայտնութիւնն է:

Քրիստոնէական կեանքի զարգացման եւ յաւաքացման համար ալ խնդիրը նոյնն է: Նոր կրտակարանին մէջ դէպի յառաջ առնուած ամէն մէկ քայլ, կեանքի իւրաքանչիւր նոր պոթկում կրնայ կապ ունենալ նոյն եւ միակ պատճառի մը հետ, այն է տեսնել բան մը Քրիստոսի Անձին մէջ զոր առաջ չէր տեսնուեր:

Ծառայութեան համար ալ խնդիրը տարբեր չէ: Պօղոսի դարձը տեսիլքի մը հետեւանքը եղող ամենէն հիանալի օրինակն է: Իր հոգեւոր յառաջացումն ալ նմանապէս աւելի կատարեալ յայտնութեան մը արդիւնքն է: Գալով իր առաքելութեան, լսեցէք թէ ինչ կ'ըսէ ինք: «...Աստուած հաճեցաւ իր Որդին ինծի յայտնել, որպէսզի զԱյն քարոզեմ (յայտարարեմ)»: Ուշագրութեան առէք թէ ինչ է յայտնութեան նպատակը:

Վերջապէս փրկութեան լրումին մասին ալ յայտարարութիւնը բացորոշ է. «Մենք... Անոր պէս պիտի ըլլանք, քանզի զԱնիկա պիտի տեսնենք՝ ինչպէս է»:

Քրիստոնեայ կեանքը, ուրեմն, սկիզբէն մինչեւ վերջը յայտնութեան մը գործն է: Երբ տեսիլքի կամ յայտնութեան մասին կը խօսինք, այս է որ կը հասկնանք:

Խորհրդապաշտութեան խնդիր չկայ հոս: Սբ. Հոգին Տէր Յիսուսը իրական կ'ընէ մեր սրտերուն: Առարկայական տեսիլք մը չէ, այլ ենթակայական յայտնութիւն մը:

«...Թող ձեր սրտին աչքերը լուսւորէ...»: Այս համարով կը տեսնենք որ ճշմարիտ տեսիլքը մտածութեան գործ մը ըլլալէ աւելի գործով խնդիր մըն է:

ՀՈԳԵԻՈՐ ՏԵՍԻԼՔԻՆ ՔԱՆԻ ՄԸ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ:

Ա. Հոգեւոր տեսիլքը միութեան ազդակ մըն է: Անիկա է որ կեանքին, մանաւանդ հաւաքական կեանքին միութիւն, յարակցութիւն կուտայ:

Առաւ. Իթ. 18ին անգլիարէն թարգմանութիւնը կ'ըսէ, «Հոն ուր տեսիլք չկայ, ժողովուրդը կը

կորսուի»: Տառացիօրէն՝ կտոր կտոր կ'ըլլայ:

Բաւական է միայն Հեղիի օրերը նկատի առնել, հասկնալու համար թէ որքան ճշմարիտ է այս դիտողութիւնը: Տեսիլքի չգոյութեան պատճառաւ (Ա. Թագ. Գ. 1) Իսրայէլ կը գտնուի բաժան բաժան ըլլալու մօտեցող վիճակի մը մէջ: Ազգը կորսնցուցած է իր խարիսխը, կորսնցուցած է իր ուժը: Ան իր վկայութիւնն անգամ կորսնցուցած է — Տապանակ ուխտին, — անիկա Փղշտացիներուն քով է: Ժողովուրդին միութիւնը ամէն տեղ վտանգի տակ է:

Հոգեւոր տեսիլքը միացնող եւ հաստատող գորութիւն մըն է:

Ո՛ւր է գաղտնիքը այն զմայլելի եղբայրական հաղորդութեան, որուն պատկերը կը տեսնենք նախնական եկեղեցւոյն մէջ: Անոնք ամէնքն ալ Տէր Յիսուս Քրիստոսի յայտնութիւնն ունէին: Ահա հոս է ամբողջ գաղտնիքը:

Անոնք վարդապետական հակամարտութեանց չէին յանձնել ինքզինքնին: Անոնք՝ իրենց տեսակէտները բաժնող հարցերը երբեք բերան չառնելու հերոսական(““) որոշումը չէին տար: Ի՞նչ հարկ կար:

Երբ սիրտն է որ բռնուած է — որովհետեւ Տէրը յայտնուած է անոր — Աստուծոյ ժողովուրդին ցիրուցան մերձեցումը չուշանար այլեւս:

Եւ մեծ ոյժ մը կայ հոս:

Նայեցէք սա առաջին քրիստոնեաներուն: Որովհետեւ անոնք ամէնքն ալ տեսած են բան մը որ ուրիշներ չէին տեսներ, անոնք այնպիսի ոյժ մը եղան որ այլեւս աշխարհ պէտք էր նկատի առնել զանոնք:

Բ. Հոգեւոր տեսիլքը ազատագրութեան զօրաւոր ազդակ մըն է:

Միմիայն մէկ Քրիստոսի տեսիլքը կրնայ ձեռ ազատել այնպիսի դրութիւններէ որոնց մէջէն կեանքը անհետացած է:

Նայեցէք Տարսոնացի Սօղոսին:

Իրեն համար հրէականութենէ ուրիշ բան գոյութիւն չունէր տիեզերքի մէջ:

« — Իմ հայրենի աւանդութիւններու խիստ նախանձաւոր... էի» (Գաղ. Ա. 14):

Հրէութեան համար իր նուիրումը այնքան անսահման էր որ իր երակները կ'այրէր կ'արծեա: Ով որ փորձէր հրէութեան մասին անոր հետ վիճաբանիլ, շուտով կը հասկնար որ իր դէմինը անկարեկիր անձնաւորութիւն մըն է:

Օր մը ի՞նչ կը պատահի սակայն:

Տարսոնցի Սօղոս Տէր Յիսուսը կը տեսնէ փառքի մէջ:

Եւ հետեւանք ի՞նչ կ'ըլլայ:

...Այլեւս ոչ հրեայ կայ ոչ ցոյն... Քրիստոս է ամէնը ամէն բանի մէջ»:

Գ. Հոգեւոր տեսիլքը համբերութեան գաղտնիքն է: Ան է որ մեզ կարող կ'ընէ տոկայու եւ դժուարին հանգրուանները յաղթականօրէն անցնելու:

Ան էր որ Մովսէսին նեցուկ եղաւ Փարաւոնի բարկութեան գէշ օրերուն մէջ: «Վասնզի համբերեց, որպէս թէ անտեսանելին կը տեսնէր»:

Որոշ է որ եթէ Պօղոս առաքեալ կրցաւ առանց տկարանալու իր բազմաթիւ տկարութիւններուն մէջէն անցնիլ, ատիկա իր ունեցած Քրիստոսի տեսիլքին շնորհիւ էր:

Երբ սրտին աչքերը Տէրը տեսնեն, երբ սիրտը զԱյն բռնէ, կեանքի դժուարութիւնները այլեւս բոլորովին տարբեր կ'երեւին: Փորձութիւններն իրենց երեւոյթը կը փոխեն:

Երբ փորձութեան ժամը հնչէ, հաւատալիքները կրնան մեզի օգնութեան գալ: Հանգանակի մը մէջ որեւէ բան կա՞յ որ կարենայ մեզի օգնել երբ մենք հալոցին մէջէն անցնելու ըլլանք: Ո՛չ: Այսպիսի ժամերու ատեն մեզի ուրիշ բան մը պէտք է — տեսնել, տեսնել աւելի հեռու, տարբեր տեղ մը, ուրիշ աշխարհի մը մէջ:

Այն ատեն, բայց միայն այն ատեն է որ մենք առանց տկարանալու կրնանք անցնիլ խորութիւններու մէջէն, եւ եթէ անդունդը ականջ ունենար, երբեմն պիտի լսէր որ մեր սիրտը կ'երգէ —

Աստուածային խաղաղութիւն

Որպէս հոսանք անսահման

Կը քալէ միշտ յաղթական,

Կատարեալ ու յարաճուն:

Գոնէ այս է մեր անձնական փորձառութիւնը: Ամփոփելով, կեանքի մը լեցանութիւնը ամբողջովին կը դառնայ մեր սրտերուն մէջ տեղի ունեցած Քրիստոսի մէկ յայտնութեան շուրջ: Եւ Աուրբ Հոգին է տոյս յայտնութեան միջնորդը:

Խնդրենք Աստուծոյ որպէսզի մեր հոգեւոր աչքերը բանալ, եւ իր Որդւոյն վերաբերեալ բաներուն մէջ մեզի տրուի տեսնել միշտ աւելի եւ միշտ լաւագոյնս:

Թ. Ա. ՍՓԱՐՔՍ

ՍՈՒՐԲ ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԳԻՐԲ Ը. ԳԼՈՒԽ 8

Ներքին պալլար

Յայնժամ ներքին սենեակին այս ուժգին պայքարի ընթացքին, մինչ կը հալածէի իմ հոգիս սրտիս գաղտնի խոռոչներուն մէջ, դէմքս հոգիիս պէս խռոված, խօսքս կ'ուղղեմ Ալիփիոսի, (իւր մտերիմ բարեկամը) եւ կ'աղաղակեմ, «Է՛հ, ի՞նչ, հոս ի՞նչ կ'ընենք մենք, Հլսեցի՞ր թէ տգէտները կ'ելլեն եւ երկինքը կը մտնեն, եւ մենք մեր անսիրտ գիտութիւնովը ահա կը տապաւնորենք արիւնի եւ մարմնի մէջ: Ամօ՞թ է անոնց հետեւիլը: Նոյնիսկ ամօթ չէ՞ մեզի որ անոնց չենք հետեւիր»(1):

Կարծեմ ասոնք եղան իմ խօսքերս, խռովութիւնս յանկարծակի գիտ հեռացուց իրմէն: Նա կը լսէր եւ անակնկալի եկած կը դիտէր գիտ, ինչու որ շեշտս տարբեր էր: Ճակատս, այտերս, աչքերս, դէմքիս գոյնը եւ ձայնիս շեշտը լաւ եւս կը պատմէին իմ հոգւոյս վիճակը, քան ինձմէ խուսափած խօսքերը...:

ԳԼՈՒԽ 11

Վերջին պալլարները

Այսպէս կը տառապէի ու կը չարչարուէի, ինքզինքս անծառօթ դառնութեամբ մը ամբաստանելով, դառնալով եւ գլորելով իմ կապերուս մէջ մինչեւ որ յաջողէի բոլորովին խզել այդ շղթան որ թէեւ միմիայն տկար օղակով մը ետ կը բռնէր գիտ, բայց տակաւին կը բռնէր գիտ: Եւ Դուն Տէր, իմ հոգւոյս գաղտնի տեղերը կ'ստիպէիր գիտ, եւ Քու խիստ ողորմութիւնդ թէ վախի եւ թէ ամօթի կրկնակի հարուածներով կը խարազանէր գիտ, արգիլելու համար նոր դանդաղութիւն մը, որ այս տկար եւ վերջին շղթա-

.....

(1) Օգոստինոսի քիչ առաջ պատմուած էր երկու պալլատական սպաներու յանկարծակի դարձի մասին: Անոնք քրիստոնեայի մը տնակին մէջ պատահամբ կարգաւով եգիպտացի մենակեացի մը, Անտոնիոսի դարձին պատմութիւնը, տեղւոյն վրայ իրենք ալ կը հրաժարին աշխարհէ եւ իրենց խոստմանալից պաշտօններէն, ու լքելով արքունական պերճանքը կը նուիրուին Աստուծոյ:

յին խզումը ուշացնելով, կրնար սեղմումի նոր
ոյժ մը տալ անոր:

Քանզի ներսէս ինքզինքիս կ'ըսէի, «Օ՛հ, յա-
ռա՛ջ, ո՛չ մէկ յապաղում: Եւ սիրտս արդէն
կը հետեւէր խօսքիս, գործելու վրայ էի եւ չէի
գործեր: Եւ իմ անցեալ կեանքիս անդունդին մէջ
չէի իյնար, բայց ոտքի կանգնած էի անոր եզեր-
քը եւ կը շրջէի: Ապա կը ջանայի, եւ հասնելու,
ձեռք ձգելու, բռնելու համար ինչի՞ պէտք կար:
Ու չէի հասներ, ձեռք չէի բերեր, ոչինչ բռ-
նուած էր: Վարանելով մեռնելու մահուան եւ
ապրելու կեանքին, յաւէտ թոյլ կուտայի որ իմ
մանկութեան ընկերս չարը տիրապետէր ինծի
քան այս լաւագոյն օտարականը: Եւ որքան կը
մօտենար այս չրոնուելիք բոպէն, ուր իմ էութեան
թիւնս պիտի փոխուէր, այնքան աւելի կ'ահա-
բեկէի: Ոչ ետ եկած էի, ո՛չ շեղած սակայն քայլս
առկախուած էր:

Եւ այս ունայնութեանց ունայնութիւններէն,
իմ հին սիրուհիներս կը քաշէին իմ քղանցքէս
եւ կ'ըսէին ցած ձայնով, «Կը վռնտե՞ս մեզ, ի՛նչ,
այս պահէս սկսեալ այլեւս քեզի հետ չպիտի՞
ըլլանք, եւ առ յաւէտ: Եւ այս պահէն սկսեալ
այս եւ այն քեզի չպիտի՞ թուլատրուի, եւ ընդ
միջոց: Եւ ինչ որ ինծի կը թելադրէին զորս
Այս կամ Այն կը կոչեմ, ինչ որ ինծի կը թելադ-
րէին ո՛վ իմ Աստուածս, թող Քու ողորմութիւնդ
աւրէ Քու ծառայիդ սրտէն: Ի՛նչ պղծու-
թիւններ, ի՛նչ անպատուութիւն: Եւ ալ դիմա-
ցէս չէ որ ինծի կը մօտենային կռուազան եւ
յանդուգն, այլ երկչոտ մրմունջներով շշնջուած
ուսիս վրայէն, կողմնակի յարձակումներով իմ
արհամարհանքիս մէկ նայուածքը կը խնդրէին:
Տակաւին զիրենք ետ մղելու իմ վարանումիս
մէջ, զիս ուշ կը ձգէին, իրենցմէ պրծելու ու եր-
թալու հոն ուր կանչուած էի: Զի սովորոյթին
ուժգնութիւնը կ'ըսէր, «Պիտի կրնա՞ս ապրիլ ա-
ռանց անոնց»:

Եւ արդէն անոնք իսկ միայն յոգնաբեկ ձայ-
նով կը խօսէին ինծի, զի այն կողմը ուր կը
դարձնէի ճակատս եւ ուրկէ անցնելու կը վախ-
նայի, կը քօղազերծուէր ժուժկալութեան պար-
կեշտ վեհափառութիւնը զիս հրաւիրելով — չէ
թէ տարփուհի մը ժպտումն ալ պարկեշտ գըզ-
ւանքներով — անվախօրէն իրեն մօտենալու: Եւ
զիս ընդունելու եւ գրկելու համար կ'երկարէր իր
բարեպաշտ թեւերը որոնք լեցուն էին բարի օ-
րինակներով, տղաք, աղջիկներ, բազմաթիւ ե-
րիտասարդներ, ամէն տեսակ տարիքաւորներ,
պատկառելի որբեւարիներ, կուսութեան մէջ ծե-

րացած կիներ, եւ այս սուրբ կեանքերուն մէջ
ժուժկալութիւնը անպտուղ չէր, այլ կը ծնէր երկ-
նային ուրախութիւններու այն սերունդը զորս
Տէ՛ր, Քու սիրոյդ կը պարտի:

Եւ կը թուէր թէ ինձ կ'ըսէր անոյշ եւ քաջա-
լերական հեգնանքով մը, «Ի՛նչ, դու չպիտի՞ կա-
րենաս ինչ որ կարելի է այս տղոց, այս կիներ-
րուն: Արդեօք իրենցմէ՞ է եւ ո՛չ թէ իրենց Տէ՛ր
Աստուծէն այս կարելիութիւնը: Իրենց Տէ՛ր Աստ-
ուածն է որ զիս իրենց կուտայ: Դուն քու վրադ
կը կոթնիս եւ կը դողդոջե՞ս: Ու կը զարմանա՞ս:
Համարձակօրէն նետուէ իր վրայ, մի վախնար,
Ան չպիտի քաշուի որ դուն վար իյնաս»: Եւ ես
կը կարմրէի, քանզի դեռ կը լսէի ունայնութեանց
մրմունջը, ու կը մնայի վարանոտ, առկախ: Եւ
ան (ժուժկալութիւնը) դարձեալ կը խօսէր ինծի
ու ես կը կարծէի լսել անոր ձայնը «Խուլ եղիր
այդ հողեղէն անդամներուդ ձայնին զանոնք նը-
ւաճելու համար: Իրենց քեզի պատմած հաճոյք-
ները բաղդատելի՞ են քու Տէ՛ր Աստուծոյդ օրէն-
քին քաղցրութեանց»: Այս ներքին պայքարը
մենամարտ մ'էր իմ եսիս եւ իմ միջեւ: Եւ Ա-
լիփիուս փարած իմ կողքիս, լոռութեամբ կըս-
պասէր այս տարօրինակ յեղափոխութեան ել-
քին:

ԳԼՈՒԽ 12

«Ա՛ն կարդա, ա՛ն կարդա»

Երբ խորհուրդներս էն խոր տեղերէն ժողվե-
ցին եւ իմ բովանդակ թշուառութիւնս քշեցին
սրտիս աչքերուն առջեւ, ահարկո՞ւ փոթորիկ մը
պալթեցաւ, լեցուն արտասուաց անձրեւով մը:
Եւ զանոնք իմ բոլոր հառաչանքներով թափելու
համար ելայ եւ հեռացայ Ալիփիուսէն: Առանձ-
նութիւնը իմ արցունքներուս ազատութիւնը պի-
տի տար ինձ, եւ բաւական հեռի քաշուեցայ,
անհանգիստ չըլլալու համար նոյնիսկ այնքան
սիրելի ներկայութենէ մը:

Այդ էր վիճակս, զոր նա նշմարեց, ինչու որ
չեմ գիտեր, ինչ բառ մը փախաւ բերնէս, ուր
արցունքով ուռած ձայն մը թրթռաց: Ելայ: Ան
մեր նստած տեղը մնաց, խոր զարմացման մէջ:
Եւ ես չեմ գիտեր ինչպէս զացի պառկելու թը-
զենի մը տակ եւ արձակեցի արցունքներուս
սանձերը, ու աչքերուս աղբիւրները հոսեցան ի-
բր ընդունելի զոհի մը արիւնը: Կը խօսէի Քեզի
ոչ ճիշդ այդ խօսքերով այլ այս իմաստով, «Է՛հ,
միջեւ ե՞րբ, Տէ՛ր, միջեւ ե՞րբ պիտի բարկա-
նաս Տէ՛ր: Իմ անցեալ անօրէնութիւններուս յի-

շատակը մի պահեր», վասնզի կը զգայի որ տակաւին կը բռնէին զիս եւ արցունքով կ'աղաղակէի, «Մինչեւ ե՞րբ, մինչեւ ե՞րբ, վա՛ղը, վա՛ղը, ինչո՞ւ ոչ այս բոպէին, ինչո՞ւ այս ժամուն իսկ չվերջանայ իմ ամօթս»:

Կը խօսէի եւ կուլայի փշրուած սրտի մը բոլոր դառնութիւնովը եւ յանկարծ լսեցի մօտակայ տունէ մը տղու կամ աղջկայ ձայնի մը պէս որ կ'երգէր ու կը կրկնէր յաճախ «Ա՛Ռ ԿԱՐԴԱ, Ա՛Ռ ԿԱՐԴԱ» եւ անմիջապէս դէմքս փոխելով սկսայ լըծօրէն փնտռել թէ արդեօք այս կրկներգ մը չէ՞ր, գործածուած ոեւէ մանկական խաղի մը մէջ եւ այս տեսակ բան մը չկրցի յիշել: Արտասուացս աղբիւրը չզսպեցի, եւ այստեղ ուրիշ բան մը չտեսայ եթէ ոչ Աստուածային հրաման մը բանալու առաքեալին Գիրքը եւ կարդալ հանդիպած առաջին զուլիսը: Գիտէի որ Անտոնիոս(1) օր մը Աւետարանը կարդացած պահուն, ըմբռնեց թէ իրեն ուղղուած էր այս խօսքը, — «Գնա՛, ունեցածդ ծախէ, եւ տուր աղքատներուն ու երկինքը գանձ պիտի ունենաս ու եկուր Իմ ետեւէս»: Եւ այսպիսի պատգամ մը զայն անմիջապէս քեզի դարձուցած էր:

Շուտով ետ եկայ, հոն ուր Ալիփիուս նստած էր, վասնզի ելած ատենս Առաքեալին Գիրքը հոն թողուցեր էի: Առի, բացի եւ լռութեամբ կարդացի առաջին զուլիսը որուն վրայ ինկան աչքերս, «Ոչ թէ անառակութիւններով ու գինովութիւններով եւ ոչ թէ խառնակ անկողիններով ու պղծութիւններով եւ ոչ թէ հակառակութիւններով ու նախանձով, հապա ձեր վրայ հագէք Տէր Յիսուս Փրփստոսը ու մարմնի խնամք մի տանիք ցանկութիւններու համար»: Զուգեցի եւ պէտք չունեցայ աւելին կարդալու, հագիւ աւարտած էի այս տողերը, սրտիս մէջ ապահովութեան լոյսի պէս բան մը տարածուեցաւ որ փառատեց իմ անորոշութեանս խաւարը:

Այն ատեն գրքի մէջ մատիս նշանը, կամ ոեւէ ուրիշ բան մը ձգելով զոցեցի զայն եւ հանդարտ դէմքով մը ամէնը պատմեցի Ալիփիուսին: Եւ ինքն ալ իր կարգին ինծի յայտնեց թէ ինչ կ'անցնէր իր մէջ առանց իմ գիտնալու: Ուզեց որ ցոյց տամ կարդացածս, ցոյց տուի եւ ինծմէ աւելին կարդալով գտաւ հետեւեալ խօսքը զոր ես չէի նշմարած: «Հաւատքի մէջ տկար եղողը ընդունեցէք»: Այս իրեն համար առաւ եւ վկայեց ինծի: Բարի եւ առողջ որոշման մը մէջ զօրացած այս ազդարարութեամբ եւ ներգաշնակ այդ բարոյական մաքրութեան հետ որմէ ես շատոնց հեռի էի, ինծի միացաւ անխռով եւ անվարան:

Նոյն բոպէին գացինք մայրս գտանք եւ իրեն պատմեցինք ինչ որ տեղի ունեցաւ: Ուրախացաւ թէ ինչպէս այս տեղի ունեցաւ, հրճուանքէն կը դողար, կը յաղթանակէ՛ր: Եւ կ'օրհնէր Քեզ, Դուն որ կարող ես մեր խորհածէն եւ խնդրածէն աւելին ընելու, ինչու որ ինծմով Դուն իրեն շատ աւելին շնորհեցիր քան ինչ որ խնդրած էին իր աղօթքներն ու յուզիչ արցունքները: Այնքան լաւ դարձած էի Քեզի, որ ալ կիներ չէի փնտռեր, որ ալ կը լքէի այս աշխարհին բոլոր յոյսերը, յետ այսու ելած ըլլալով այդ հաւատքի քանակին վրայ, որուն վրայ երբեմն Քու յայտնութիւնդ զիս ոտքի կանգնած ցոյց տուած էր մօրս: Եւ իր սուգը փոխած էր իր յուսացածէն շատ աւելի առատ բերկրութեան մը, աւելի քաղցր եւ աւելի պարկեշտ քան ինչ որ կը յուսար ընդունիլ իմ մարմնեղէն գաւակներէս:

ԳԻՐԳ Թ. ԳԼՈՒԽ 1

Գոհարանութիւն

«Ով Տէր, ես քու ծառադ եմ, Քու ծառադ եւ Քու ազախինիդ որդին»: Դուն իմ կապերս խորտակեցիր, եւ Քեզի օրհնութեան պատարագ պիպի մատուցանեմ: Թող իմ սիրտս, իմ լեզուս օրհնեն Քեզ եւ թող բոլոր ոսկորներս գոչեն, «Տէր, ո՞վ է Քեզի նման»: Թող խօսին եւ պատասխան տուր ու ըսէ իմ հոգւոյս, «Ես քու փրկութիւնդ եմ»: Ո՞վ էի, ի՞նչ էի ես, որքա՛ն չար իմ գործերուս մէջ, եթէ ո՛չ գործերուս, իմ խօսքերուս մէջ, եթէ ո՛չ խօսքերուս, իմ կամքիս մէջ: Բայց Դուն, Տէ՛ր բարութեան եւ ողորմութեան, մէկ ակնարկով չափեցիր իմ մահուանս խորութիւնը եւ իմ սրտիս խորերէն ապակաւութեան անդունդը դուրս քաշեցիր: Եւ ուրիշ բան չկար ընելիք, եթէ ոչ չուզել իմ կամքս, այլ Քուկինդ:

Սակայն այսքան տարիներէ ի վեր ո՛ւր էր, եւ ո՛ր գաղտնի ու ծածուկ ծալքերուն թաղուածքէն դուրս եկաւ յանկարծ իմ ազատ կամքս, «Գլուխս ծռելու Քու քաղցր լուծիդ եւ ուսերս Քու թեթեւ բեռանդ տակ»: Ո՞վ Փրփստոս, ո՞վ Յիսուս, իմ նեցուկս ու իմ Փրկիչս: Ի՞նչ յեղակարծ հաճոյքներ չէի գտներ ունայնութեանց հաճոյքները ուրանալուս մէջ: Իմ վախս անոնցմէ լքուիլ եղած էր, եւ զանոնք ձգելս իմ հաճոյքս եղաւ: Ինչու որ Դուն զանոնք կը վռնտէիր իմ մէջէս ով ճշմարիտ, ով գերիշխան քաղցրութիւն, կը վռնտէիր զանոնք եւ անոնց տեղ Դուն կը մտնէիր ոեւէ հեշտանքէ աւելի քաղցր, բայց ոչ

թէ մարմնի եւ արեան: Աւելի շողշողուն քան
ոեւէ լոյս բայց աւելի ներքին քան ոեւէ գաղտ-
նիք, աւելի վերացած քան ոեւէ բարձրութիւն,
սակայն ոչ անոնց համար որոնք իրենք իրենց
մէջ կը բարձրանան: Արդէն իմ հոգիս ազատ էր
պատիւներու հարստութեան հասնելու, անմաք-
րութեան մէջ տապալակելու եւ անժուժկալութեան
բոցը գրգռելու կակծալի հոգէն: Եւ արդէն կը
տոռայտէի Քու աչացդ առջեւ ո՛վ իմ Լոյսս, ո՛վ
իմ հարստութիւնս, ո՛վ իմ փրկութիւնս, Տէ՛ր իմ
Աստուածս:

Քաղուածաբար
Հ. Բ. ՊՈԽՏԱՔԵԱՆ

Փարիզ

ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ԺՈՒԼԻՆ ԲԷՆՖՐՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Վեր. Ժաքօպի իր հոգեւոր գործունէութեան
ընթացքին ապաշխարութեան շատ նշանաւոր
դէպքերու հանդիպեցաւ, որոնցմէ ամենէն արտա-
կարգը թերեւ ան էր որ 1905ի Մայիսին Շիգա-
կոյի մէջ տեղի ունեցաւ ու մեծ արձագանգ գը-
տաւ Ամերիկայի ու Անգլիոյ մէջ:

Յունիս մէկին առաւօտը երկու կիներ Վեր.
Ժաքօպի գոլորը կը զարնէին ու իրմէ կը խնդրէ-
ին բարեհաճիլ այցելելու երիտասարդի մը որ
նախորդ օրը յանկարծ խուլ ու համր եղած էր:
Ահաւասիկ այն պարագաները որ եղածին պէս
պատմուեցաւ:

Այս երիտասարդը որ 24-25 տարեկան էր, ի-
րեն հասակակից ուրիշ 2-3 բարեկամներու հետ
«Ուիլիս»ի խաղ մը հազիւ լիցցուցեր էին, երբ
խօսակցութիւնը կրօնքի շուրջ դարձաւ: Որով-
հետեւ անոնք արդէն կրօնասէր չէին, իրենց դի-
տողութիւններն ալ բնականաբար երկիւղած չէ-
ին: Պահ մը վիճաբանելէ յետոյ, իրենցմէ Ժուլի-
էն Րէնֆրօ անուամբ մէկը ըսաւ, «Աստուծոյ չեմ
հաւատար եւ կը խորհիմ ճիշդ Ինկլըսօլի պէս,
թէ Աստուած մը գոյութիւն չունի եւ ես չպիտի
հաւատամ Իրեն թէ որ Ինք չփաստէ ինձ Իր գո-
յութիւնը զիս համր ու խուլ ընելով»:

Հազիւ թէ Րէնֆրօ այս յանդուգն բացազան-
չութիւնն ըրած էր, իր ձեռքերը վեր տարածելով

յանկարծ երերալով ինկաւ գետինը: Ահապա-
րանքով զինք վերականգնեցուցին եւ զարման-
քով նշմարեցին որ ան խուլ ու համր եղած էր

Բժիշկը որ անմիջապէս կանչուած էր, կար-
ծեց նախապէս թէ երիտասարդական թեթեւա-
միտ խաղի մը առջեւ կը գտնուի, բայց քիչ յե-
տոյ իր կարծիքը փոխեց յայտարարելով, «Ես
բնաւ զարմանալի պիտի չգտնէի որ երիտասար-
դը խուլ եղած ըլլար գերազրգիւ ճգնաժամային
մէջ վայրկեանի մը մէջ, բայց այդպիսի պարա-
զայի մը մէջ պիտի գտնէի իր վրայ ֆիզիքական
մասնաւոր նշաններ, զորոնք երբեք չեմ գտներ
հիմա: Ան իր բոլոր միւս կարողութիւնները պա-
հած էր, անոր խորհուրդներուն յարակցութիւնը
չէր պակսեր եւ անոր ընդհանուր վիճակը աղէկ
էր»:

Արդ, Րէնֆրօին վիճակին ու արկածը շրջա-
պատող պարագաներուն տեղեկացաւ Վեր. Ժա-
քօպի անոր քով երթալէն առաջ ու երբ անոր
բնակարանը եկաւ, գտաւ զայն սեղանի մը քով
նստած, քաղցր ու հանդարտ երեւութով, կանո-
նաւոր կերպով հագուած, վերջապէս անոր բոլոր
արտաքին երեւոյթը ցոյց կուտար թէ հասարակ
երիտասարդ մը չէր նա: Վեր. Ժաքօպի անոր
քով մտնելուն, հոն զանուագներէն մէկը թուղթի
մը վրայ գրելով հասկցուց Րէնֆրօին որ այցե-
լուն պատուէի մըն էր: Վեր. Ժաքօպի անոր
քովը նստելէ եւ ամփոփման վայրկեան մը անց-
նելէ յետոյ գրեց, «Աստուած ձեզ կը սիրէ»:

«Գիտեմ» գրեց իր կարգին Րէնֆրօ, այս կեր-
պով խօսակցութիւնը շարունակեց Րէնֆրօ, բա-
ցատրելով թէ ինք բացարձակապէս տարակու-
սեք էր Աստուծոյ գոյութեան վրայ, բայց հիմա
ատոր հակառակը համոզուած էր, համոզուած էր
թէ Աստուած զինքը կը կանչէր Իրեն ծառայե-
լու:

«Ինչո՞ւ համար Աստուծոյ կը հաւատա՞ք» հար-
ցուց Պր. Ժաքօպի:

— Որովհետեւ ես յայտարարեցի չհաւատալ
Իրեն եթէ նա զիս խուլ ու համր չընէ. այն ա-
տեն Աստուծոյ ակնախա պայծառութիւն մը, Իր
աչքերէն փայլակի նման ակնարկ մը զիս զար-
նելով դրաւ զիս այս վիճակին մէջ:

Ան խոստովանեցաւ նաեւ թէ որչափ կը ցա-
ւէր իր ըրածին վրայ:

— Գիտեմ, գրեց ան, որ Աստուած գոյութիւն
ունի ու կը լսէ մեր աղօթքները:

Վեր. Ժաքօպի շարունակեց, «Աստուած ձեզ
կը սիրէ»:

— Կը հաւատամ ըսաւ Րէնֆրօ, որովհետեւ

տարիներով ես լսեցի Անոր կոչը եւ մերժեցի յանձնուիլ Անոր:

Իր կանխաւ ունեցած փորձառութիւններէն մի քանիները երիտասարդիս աչքերուն առջեւէն անցնելէն յետոյ Պր. Ժաքօպի բացաւ Աստուծոյ Գիրքը ու ցուցուց Բէնֆրօին Յովհ. Զ. 37, «Ան որ ինծի կուգայ, բնաւ զուրս պիտի չհանեմ»:

Բէնֆրօ զլուխը խոնարհեցնելով ցոյց տուաւ իր հաւանութիւնը:

Վեր. Ժաքօպի Եսայ. Ա. գլխուն անցնելով ցուցուց 18, «Հիմա եկէք վիճարանինք, կ'ըսէ Տէրը, եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս են, ձիւնի պէս պիտի ճերմկնան, եւ եթէ որդան կարմիրի նման են, ասորի պէս ճերմակ պիտի ըլլան»: Մատիտով մը Բէնֆրօ իր Ս. Գրքին մէջ համարին տեղը ենթագծեց:

Յետոյ անոր ցուցուց Յովհ. Ե. 24, «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ, ան որ իմ խօսքերս մտիկ կ'ընէ եւ կը հաւատայ Անոր որ զի» ղըրկեց, յաւիտենական կեանք ունի ու դատապարտութեան տակ չիյնար, հապա մահուանէ դէպի կեանք անցած է»: Յետոյ մատովը ցոյց տուաւ «ունի» բառը եւ գրեց «Ամէն բան կատարուած է, գործը եղած է ու կրկին ըլլալու ալ պէտք չկայ»: «ունի» բառը ներկայ ժամանակի մէջ է. ասիկա կը նշանակէ թէ հիմա դուք յաւիտենական կեանք ունիք»:

Նորէն Բէնֆրօ հաստատողական նշան մը ցոյց տուաւ ու գրեց:

«Ես հիմա կը հաւատամ որ Աստուած գոյութիւն ունի, գիտեմ որ Յիսուս Քրիստոս բոլոր մեղաւորներուն համար մեռած է: Համոզումս ան է որ ընդունուած եմ որովհետեւ ինքզինքս հաւատքով իրեն կը վստահիմ, բայց ինծի համար վերապահուած գործ մը կայ...»:

Իրեն ներկայացուած ուրիշ համարներն ալ մեծ ուշադրութեամբ մը կարդալէ յետոյ յայտաբարեց թէ փրկուած է Յիսուս Քրիստոսի հաւատալով, ու գրեց, «Գիտեմ որ արդարացած եմ, բայց պէտք է որ իրեն համար բան մը ընեմ, գոնէ պէտք է որ իր կամքը կատարեմ ու ինքզինքս պատրաստեմ զգայարաններս վերստանալէ առաջ աւետարանը քարոզելու, որպէսզի կարենամ հոգիները հաւատքի առաջնորդել»:

— Պիտի սիրէի՞ք դաւանիլ Յիսուս Քրիստոսը իբր ձեր Փրկիչը ձեր բարեկամներուն առջև (քովի սենեակին մէջ իր բարեկամներէն մէկը ու երկու կիներ կային):

— Այո, ըսաւ ան, ու անմիջապէս ելլելով կայնեցաւ դրան առջեւ եւ կարճառօտ իր դաւանու-

թիւնը տուաւ գլխու շարժումով եւ կամ գրելով, ցոյց տալով թէ ինք կատարելապէս երջանիկ է:

Մի քանի օր յետոյ ան դնաց Շըրէվըրֆօրթ իր ծնողացը քով: Թէպէտ համր ու խուլ, նորս յետայն ինկաւ ան Աստուծոյ խօսքին ուսումնասիրութեան ետեւէն, գրով ծանուցանելով թէ իր կեանքը Տէրոջը գործին պիտի նուիրէ երբ իր զգայարանները նորէն ունենայ:

Մի քանի շաբաթ վերջը նամակի մը միջոցաւ ծանուցանեց ան Պր. Ժաքօպին թէ այսինչ օր այսինչ ժամուն Տէրը զինք պիտի բժշկէ: Զարմանալի բան, բայց իրողութիւն, որոշուած օրուան ու ժամուն տրուեցան իրեն խողովեան եւ խօսելու կարողութիւնները:

Իր առաջին խօսքերը «Փառք Տէրոջը» եղան, ու իր շուրջը հաւաքուած բարեկամները «Ասիկա հրաշք մըն է», աղաղակեցին:

Բէնֆրօ Աստուածաբանութիւն ուսանելու համար դպրոց մտաւ եւ զայն յաջողապէս ատարեւելէ յետոյ Տէրոջը մէկ արգիւնաւոր վկան եղաւ:

Տէրը հիմա ալ հրաշքներ ընող Աստուած է, բայց սիրելի ընթերցող, դուն մի փորձեր հրաշք տեսնելէ յետոյ հաւատալ, բայց ընդունէ զայն ինչ որ Տէրը ըսաւ, «Երանի՜ անոնց որ չտեսած կը հաւատան», հաւատքը մարդկային ամենագորաւոր տեսողութեան զգայարանն է, որուն տեսողութեան շիղը մխրճուած է Ս. Գրքի յաւիտենական խոստումներուն խորախորուն նկուղներուն մէջ, որոնց հանքերուն տեղեակ է միայն ինքը: Քանի որ կայ այսպիսի կեանք մը, ամենամեծ սխալը ըրած պիտի ըլլայ թէ որ զայն չընդգրկես սիրելի ընթերցող:

Թարգ. Կ. Ե. Պ.

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՕԳՈՄՏՈՍ 4.—

ՅՈՎՍԻՍ ՀՈԳԵՒՈՐ ԲԱՐԵԿԱՐԳԻՉ ՄԸ

Դաս Դ. Թագ. ԻԳ. 1-5, 21-23

Կարդալ Բ. Օրին. Զ. 4-13:

«Եւ ասկէ առաջ անոր նման թագաւոր մը չեղաւ, որ իր բոլոր սրտովը ու բոլոր հոգւովը ու բոլոր զօրութիւնովը Տէրոջը դառնայ՝ Մովսէսի

բոլոր օրէնքին համեմատ, ոչ ալ անկէ ետքը անոր նմանը ելաւ» (Դ. Թազ. ԻԳ. 23):

Այս երիտասարդ թագաւորին հոգեշունչ կենսագրութիւնը հոգեւոր առատ օրհնութիւններ վայելելու համար հարկ է սերտելով կարգաւ վերջը յիշուած հատուածներէն զատ նաեւ Դ. Թազ. ԻԱ. 1-ԻԳ. 30 եւ Բ. Մնաց. ԼԳ. 1- ԼԵ. 27:

Բանքերի սեղմ եւ սուղ էջերը մեզի չեն թուլատրեր մանրամասն սերտողութիւն մը: Միայն հետեւեալ կէտերը կ'ուզենք իբր ներշնչման ծրարագիր տալ Սուրբ Գրասէր ընթերցողաց օգնելու աւելի ընդարձակ և օրհնեալ սերտողութեան մը համար Ս. Դիրք ի ձեռին եւ աղօթքով Սուրբ Հոգւոյն մեկնութիւնը խնդրելով:

Ա. Յովսիայի մեծ հայրը Մանասէ, ամենէն չար թագաւորը եղած էր եւ Յուդան ու Երուսաղէմը պարշելի կուռքերով լեցուցած, անիկա նոյնիսկ տաճարին մէջ կուռք կանգնեցուց: Մանասէ թէեւ իր դարձի գալէն յետոյ կուռքերու չափաւոր մաքրագործում մը ըրաւ, բայց իր 55 տարուան երկարատեւ իշխանութիւնը ամբողջ Յուդան ապականած էր:

Բ. Յովսիայի հայրը Ամոն իր 2 տարուան կարճատեւ իշխանութեան ընթացքին յաջողեցաւ Մանասէի բարեկարգութիւնը ոչինչի վերածել ու «մանաւանդ այս Ամոնը (Մանասէէ) աւելի յանցանք գործեց», (Բ. Մնաց. ԼԳ. 23):

Գ. Ուստի երբ Յովսիա իր 8 տարեկան մանուկ հասակին թագաւորութեան գլուխը անցաւ երկիրը ահարկու վիճակ մը կը ներկայացնէր կռապաշտութեան տեսակէտէ, որուն համար ըսուած է թէ «Ամօրիացւոց բոլոր ըրածներէն աւելի էր», (Դ. Թազ. ԻԱ. 11):

Բայց Յովսիա

(ա) Իր ութը տարիքէն մինչեւ 16 տարիքը իր հօրը Դաւիթի ճամբաներուն մէջ քալած էր ամենէն բարեպաշտ մանկութիւն մը ունենալով, մեր լեզուով կիրակնօրեայ դպրոցի առաջնակարգ աշակերտ մըն էր:

(բ) Իր բարեպաշտ մանկութեան եւ ժառանգական աստուածապաշտութեան չվստահելով 16 տարեկան հասակին «իր հօրը Դաւիթի Աստուածը խնդրելու սկսաւ», մեր լեզուով՝ ապաշխարեց եւ իր հօրը Աստուածը իր անհատական, սեփական Աստուածը ըրաւ:

(գ) 20 տարեկանին ձեռք զարկաւ հսկայ բարեկարգութեան մը ամբողջ երկիրն, Երուսաղէմի եւ իր սեփական տան մէջ: Այս բարեկարգութիւնը տեւեց 6 տարի եւ պատրաստեց յետագային գալիք ազգովին, զանգուածային արթնու-

թիւնը: Երիտասարդ թագաւորը քաղաքէ քաղաք կը պտտէր եւ կուռքերը կը կործանէր:

(դ) 26 տարիքին ձեռնարկեց Տէրոջը տանը նորոգութեան, որու ընթացքին գտնուեցաւ «Մովսէսի ձեռքով տրուած Տէրոջը Դիրքը» եւ որու ընթերցումը նախ երիտասարդ թագաւորը արցունքով խոնարհութեան առաջնորդեց եւ յետոյ ամբողջ ազգը սքանչելի հոգեւոր արթնութեան մը (կարգա Դ. Թազ. ԻԳ. 1-20):

(ե) Այս արթնութեան ամենէն քաղցր պտուղներէն մին եղաւ Զատիկը, որու նմանը «Խորայէլը դատող դատաւորներուն օրերէն ի վեր եւ Խորայէլի թագաւորներուն ու Յուդայի թագաւորներուն բոլոր օրերն ալ չէր եղած» (Դ. Թազ. ԻԳ. 22):

(զ) Ու վերջապէս իր 39 տարեկան դեռ երիտասարդ հասակին մեռաւ եւ արժանացաւ մարգարէական ողբասացութեան ու համազգային սուղի: Նկատողութեան արժանի է սա կէտն ալ թէ մինչ Յովսիայի մեծ հայրը Մանասէ եւ հայրը Ամոն թագաւորաց զերեզմաններուն մէջ թաղուելու արժանի չէին սեպուած, Յովսիա «իր հայրերուն զերեզմաններուն մէջ թաղուեցաւ» (Բ. Մնաց. ԼԵ. 24):

ՕԳՈՍՏՈՍ 11.—

ԴԱՆԻԷԼ ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Դաս Դան. Ա. 8-20

Կարդալ Սաղ. ԽԶ.

Դանիէլի կեանքը տիպար երիւ.ասարգութեան կեանքն է: Յովսէփի նման իր պանդխտութեան ու գերութեան երկրին մէջ ամէն բանէ առաջ իր Աստուծոյն հաւատարիմ մնալ որոշած ըլլալով ալիւս արտաքին պարագայական ոչ մէկ բան զայն կը յուսահատեցնէ:

Դանիէլի պատանեկութեան շրջանին Նաբուգոդոնոսորի պալատական համալսարանին մէջ անցուցած իր երեք տարիները (որ այսօրուան մեր դասին նիւթը կը կազմեն) հոգեւորին հետ միասին յատուկ կերպով նաեւ ժուժկալութեան եւ առողջապահական դաս մը կարելի է նկատել: Ու գիտնալով թէ մեր մարմինները տաճար են Ս. Հոգիին, եւ թէ ժուժկալութիւնը Հոգիին պտուղներէն մին է՝ անհրաժեշտ է ուրեմն որ հաւատացեալներս այսօրուան դասէն մարմնաւոր (մանաւանդ կոկորդի) ժուժկալութիւն սորվինք, որպէսզի գիտնանք թէ մեր ուտելն ու խմելն ալ պարտին Աստուծոյ փառքին համար ըլլալ:

«Դանիէլ միտքը դրաւ որ թագաւորին ազնիւ կերակուրովը ու անոր խմած գինիովը չպղծուի»: Մեր մէջ տակաւին յարգուած սովորութիւն մըն է պատուելիները ու քարոզիչները հիւրասիրել 3-6 կամ աւելի տեսակ կերակուրներ պատրաստելով մէկ ճաշի վրայ: Յիսուս այս բանին համար Մարթան յանդիմանեց:

Ուրիշ սովորութիւն մ'է կերակուրներուն ամենէն համադրմանը (ու այսպէսով թերեւս նաեւ ամենէն դժուարամարս եւ ստամոքսին փաստակար կերակուրները) կիրակի օրուան եւ կամ Ծնունդի ու Զատիկուան նման սուրբ տօն օրերուն պատրաստել: Մինչդեռ կը մոռնանք թէ Աստուծոյ թագաւորութիւնը կերակուր ու խմածիք չէ, եւ թէ այսպիսի սուրբ օրերուն աւելի պատշաճ պիտի ըլլար ծոմապահութեամբ աղօթել քան թէ մեր մարմինները անժուժկալ կերուխուժով պղծել:

Կասկած չկայ թէ Դանիէլի երկարատե կեանքը ու մանաւանդ իր ալիւոր ձերութեան մէջ իսկ իր մտքին լուսաւոր, զգաստ եւ զօրաւոր ըլլալը պտուղն էր նաեւ իր ժուժկալ կեանքին, որուն հիմը դրաւ իր պատանեկան հասակին: Դանիէլ իր միտքը դրաւ որ «ազնիւ կերակուրով» ու գինիով չպղծուի»:

ՕԳՈՍՏՈՍ 18.—

ՄԱՐԹԱ՝ ՏՆԱՇԷՆ ԿԻՆ ՄԸ

Դաս Դուկ. Ժ. 38-42: Յովհ. ԺԱ. 17-28:

Կարդալ Սաղ. ՃԺԶ. 1-8:

«Բանբեր»ի սիրելի ընթերցողները թող թոյլ տան ինձ առիթէն օգուտ քաղելով իրենց միտքը ձգել քանի մը ամիսներ առաջ «Բանբեր»ի տպարանէն հլած զրքոյկ մը «Բեթանիա», հեղինակ Օսթին-Սփարքս, իմաստութեան ու զօրութեան Հոգիովը լեցուած Տէրոջը մէկ ծառան(1): Անոնք որ «Բեթանիա»ն ունին, թող բանան եւ այս դասին առթիւ թող կարգան անոր առաջին մասը ուր նկարագրուած է Դուկ. Ժ. 38ը, «եւ կին մը Մարթա անունով գնահիկա իր տունը ընդունեց»:

Մարթա դեռ իր սրտին դուռը չբացած իր տան դռները բացաւ Փրկչին: Ուրիշներ հիւրա-

սիրութիւնը ի գործ դնելով հրեշտակներ ընդունած էին չգիտնալով (Եբր. ԺԳ. 2), իսկ Մարթա հիւրասիրութեան գործադրութիւնովը Աստուծոյ Որդին ընդունեց իր տունը: Այս ընտանիքին մէջ հետազային Յիսուսի ձեռքով տեղացուած բոլոր օրհնութեանց բանալին կարելի է նկատել Մարթայի տանը դռան բանալին որով նա իր տունը բացաւ եւ Յիսուսը ներս ընդունեց: «Ահա Ես, դուռը կայներ եմ ու կը զարնեմ, եթէ մէկը իմ ձայնս լսէ ու դուռը բանայ...»:

Մարթա Յիսուսը իր տան մէջ ընդունած պահուն դեռ անտեղեակ էր հոգեւոր օրհնութեանց որ յետագային պիտի վայլէր: Յիսուսի այս առաջին այցելութենէն Մարթա սորվեցաւ 1. Յանդիմանութիւն կրել, 2. Շատ բաներու համար հոգ ընելով չտագնապիլ, 3. Իր քրոջ Մարիամի նման այն աղէկ բաժինը «մէկ բան պէտք է»ն ընտրել: Ու երբ ուրիշ առթիւ մը Մարթան կըրկին սպասաւորութեան մէջ կը գտնենք (Յովհ. ԺԲ. 2) այլեւս ան տագնապող եւ ջղախնայող Մարթան չէ, հապա հանդարտութեամբ ծառայող տանտիկինը:

Իր եղբոր մահուան առթիւ Մարթա Յիսուսի հետ իր խօսակցութեան պահուն ցոյց տուաւ որ ինքը «այն աղէկ բաժինը» ընտրած էր:

«Տէր, եթէ հոս ըլլայիր իմ եղբայրս չէր մեռներ»:

«Բայց գիտեմ որ հիմա ալ...»

«Այո Տէր, ես հաւատացեր եմ որ Դուն ես Բրիստոսը...»:

«Վարդապետը եկեր է ու քեզ կը կանչէ»:

Մարթայի այս վերջին խօսքը կարգախօս մը թող ըլլայ, որ մեզմէ իւրաքանչիւրս ուրիշի մը փոխանցենք՝ մեր Տէրը գտնելէն յետոյ:

ՕԳՈՍՏՈՍ 25.—

ԲԱՆԱԲԱՐԱՍ ՈՐ ԿԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԻ ՄԵԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՈՐԴԻ

Դաս Գ. Առաք Դ. 36,37: ԺԱ. 19-30

Կարդալ Սաղ. ԴԶ. 1-40: Գ. Առաք Թ. 26-30: ԺԲ. 25: ԺԳ. 1-ԺԵ. 44:

Միջիթարութեան որդի անունը տրուեցաւ Տէրոջը այս զաւկին, շատ հաւանաբար Պենտեկոստէի օրուան «Միջիթարիչին» գալուն իբր յիշատակ: Բառնաբան որ յետոյ առաքեալ ալ կոչուած է, (Գ. Առաք ԺԴ. 13) անկասկած Ս. Հոգին առաջին անգամ ստացող 120էն մին էր. նոյնիսկ ինքը Ս. Հոգւոյն մասնաշաղկապ եւ առատ մէկ չափովը լեցուած կ'երեւի (Գործ. ԺԱ. 24):

(1) «Բանբեր»ի խմբագրութիւնը շատ ցերմօրէն կը յանձնարարէ այս գրքոյկը: Եթէ չունիս անկէ հատ մը ապրիլի, եթէ դուն ունիս՝ անկէ ապսպրէ եւ նուիրէ ուրիշներուն, վստահ ըլլալով թէ այս կերպով մեծ օրհնութիւն պիտի տարածես: Դինն է 1 Գրանք: Դիմել «Բանբեր»:

Վերոյիշեալ հատուածներէն հետեւեալներուն նման խօսքեր կրնանք քաղել Բառնաբասի նշկարագիրը պատկերացնող.—

«Տէր Յիսուս Քրիստոսի համար անձը մատնող մարդ»,

«Յօժար սրտով Տէրոջը հետ կապուած»,

«Միշտ Աստուծոյ շնորհքին մէջ հաստատ կեցող»,

«Բարի մարդ, Ս. Հոգիով եւ հաւատքով լեցուն եւ հոգիներ շահող»,

«Մարգարէ կամ վարդապետ, ծոմապահ աղօթող»,

«Անձնագոհ եւ առատաձեռն»,

Երիտասարդ Պօղոսի համար անկասկած ամենէն յարմար ընկերն էր Բառնաբաս՝ մանաւանդ անոր առաջին եւ բաղդատարար զեռ անփորձ ճամբորդութեան ընթացքին.

Ինչ որ Բառնաբասի մօտ խիստ գովելի է եւ կ'արժէ որ ամէն հաւատացեալ սուրբ նախանձով մը փափաքի ունենալ, սա է թէ «Բառնաբասի մէջ Ս. Հոգին ազատօրէն գործելու ասպարէզ զբոսել եւ Ս. Հոգւոյն պառուկները ամենէն առատ եւ հասունցած քաղցրութեամբ մը երեւան եկան» եւ այն ալ տեսակով մը՝ որով ուրիշներ կրնային պառուկները առատօրէն վայելիլ: Անիկա բաղդատուած է մասամբ ամենէն մեծ առաքեալին՝ Պօղոսի հետ, եւ շատերու կարծիքն ալ սա է թէ Երրայեցուց թղթոյն անձանօթ մնացած հեղինակը Բառնաբասն է:

Անոր կենսագրականը կարելի է ամփոփել իր անուան մէջ որ կը թարգմանուի «Մխիթարութեան որդի»: Պենտեկոստէէն յետոյ անոր առաջին գործը եղաւ գործնական մխիթարութիւն տարածել իր շուրջը եղող որբերուն ու որբեւարիներուն մէջ: Յայտնի է թէ Բառնաբաս ապաշխարած էր սրտով ու նաեւ իր քսակովը: Ու յետագային երբ այլեւս ստացուածք ու դրամ չունէր, իր ձեռքերով գործելով կ'աշխատէր բարիք չործելու համար (Ա. Կոր. Թ. 6) (հաւանաբար Պօղոսի հետ վրան կը գործէր: Երբ հարկ եղաւ կարօտեալներուն նպաստ տանիլ՝ այդ նպաստը Բառնաբասի (եւ Պօղոսի) վստահուեցաւ:

Աջքառու եւ օրինակելի կէտ մըն ալ Բառնաբասի անձնագործութիւնը եւ խոնարհութիւնն է: Թէեւ նախ ինք երեւելի մէկը ճանչցուած էր առաքեալներէն, ու Պօղոսը ինք մտցուցած էր հաւատացեալներու շրջանակին մէջ, Թէեւ ինք եղած էր Անտիօքի եկեղեցիին կազմակերպիչը եւ հոն շատերուն ալ հոգեւոր հայրը, բայց երբ Ս. Հոգին իրեն ցուցուց թէ պարտ էր իր տեղը,

գործը, դիրքը եւ հոգեւոր զաւակները (նոյնիսկ իրմէն շատ երիտասարդ) Պօղոսին յանձնել, ինքը գնաց եւ իր ձեռքովը Տարսուէն Անտիօք բերաւ Պօղոսը (որ տակաւին Սօղոս կը կոչուէր) (Գ. Առաք. ԺԱ, 22-25):

Ու վերջապէս բուն ինքն իր ձեռքով իր անունին բնական վերջակէտ մը գրած կ'երեւի Ս. Գրքին մէջ (անշուշտ Ս. Հոգիին առաջնորդութեամբ) երբ նոյնիսկ գօտութեան մը հետեւանքով՝ գօտութեան առարկան եղող իր եղբորորդին Մարկոսը առաւ ու կիպրոս գնաց՝ որպէսզի ինք տեսարանէն անհետանայ եւ Աւետարանին դաշտը բոլորովին ազատ թողու երիտասարդ առաքեալին Պօղոսի առջեւ:

Վ. Ս.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՃԱՆ ՌԻԷՍԼԻ

Արթնութիւնը կը տարածուէր եւ հոգիներու թշնամին կ':տողած էր: Հուլիսի 1-ին, 2-րդ Ուէսլիի եւ Ճան Ուէսլիի կուրծք կուտային արտաքին 3 տեսակ յարձակումներու: 1. Եկեղեցւոյ բարձր աստիճան պաշտօնեաներէ, 2. Խուժանէն, 3. Զարախօս լեզուներէ: Այս վերջին տեսակը բոլորովին աշխարհ սուտերու յերկրանքն էր: Անգամ մը երբ Ճան Ուէսլի քարոզելով կը յորդորէր «Մեր փրկութեան Առաջնորդին վստահիլ, մարդ մը պօռաց, «Ո՞վ էր քու առաջնորդդ» երբ անցեալ օր ինքզինքդ կախեցիր: Ես կը ճանչնամ այն մարդը որ իր աչքովը տեսաւ երբ քու կախուած չուանդ կտրեցիր»: Այս լուրը Պրիսթօլի մէջ խորամանկութեամբ տարածուած էր եւ շատեր հաւատացած էին:

Մտիկ ընենք Ճան Ուէսլիին իր օրագրութեանէն նաեւ այս կէտին վրայ: 1741 Օգոստ 26.— «Քանի մը օր առաջ տեղի ունեցած կարգ մը խօսակցութեանց արձագանքը լսեցի: (1) Ոմանք իբր թէ ականջութիւն իսկ լսած էին թէ քարոզչու պահուս մարդ մը երեսօ ի վեր ըսած էր թէ ես, Մր. Ուէսլի, ժընեւ քաղաքը կաթոլիկներու հաշուոյն ծախու առնել ուզելով արդէն 20 Անգլ. ոսկի վճարած էի եւ թէ տունիս մէջ 2 պապա-

կան քահանայ կը պահէի: (2) Ուրիշ մը որ գլխաւորութեան մասնագէտ կարելի էր կոչել, ջանացած էր հաւատացնել թէ հաւաստի աղբիւրէ գիտէր թէ Մր. Ուէսլի Սպանիայէն շատ դրամ կը ստանար որպէսզի աղքատ դասակարգի Անգլիացիներէն փարթի մը կազմէր եւ անմիջապէս որ Սպանիացիները Անգլիոյ ցամաքը ելլէին, Մր Ուէսլի 20000 մարդոցմով անոնց պիտի միանար:

Անկլիքան եկեղեցիէն եկած հալածանքը թէեւ աւելի պաշտօնական հանգամանք ունէր, բայց երիտասարդ քարոզիչին անխախտ դիրքը այդ հալածանքներուն տոկաց, իսկ հալածանքները ինքնին սատարեցին արթնութեան կրակին հոսկայաքայլ ծաւալմանը: Չարլզ Ուէսլի Քէնթըրպլի արքեպիսկոպոսին մօտ ամբաստանուեցաւ ու կանչուելով յանդիմանութիւն եւ պաշտօնադրութեան սպառնալիք կրեց: Այս սպառնալիքին չուայթփիլտ պատասխանեց առաջին անգամ ըլլալով Չարլզ Ուէսլին խօսեցնելով Մուրֆիտդի մէջ 10000 հոգիոց բացօդեայ ժողովի մը: Իսկ ճան Ուէսլի Պրիսթօլի եպիսկոպոսին մօտ կանչուելով հետեւեալ կոշտ յանդիմանութիւնը կրեց, «Պարոն, դուք հոս գործ չունիք, դուք իրաւունք չունիք իմ թեմին մէջ քարոզելուստի ձեզի կը հրամայեմ անմիջապէս այստեղէն մեկնիլ»:

Ուէսլի պատասխանեց, «Գերապայծառ, այս աշխարհի մէջ իմ գործս բարիք ընել է: Հիմակու հիմա համոզուած եմ թէ հոս է որ կրնամ օգտակար ըլլալ: Ես կանչուեցայ Աւետարանը քարոզելու եւ վա՛յ ինծի եթէ զայս չընեմ ա՛մէն ուր որ գտնուիմ:

Անկլիքան եկեղեցւոյ կողմէ ստացած ձեռնադրութիւնը Ուէսլին տիեզերական եկեղեցւոյ հովիւ ըրած էր՝ եւ հիմա որ Աստուած անոր առջեւ լայն դռներ բացած էր, ինք այլեւս չէր ուզեր մասնաւոր թեմի մը հովուութիւնը ստանձնելով իր գործունէութիւնը սեղմ շրջանակի մը մէջ փակել: Կարգ մը բարեկամներ իրեն թելադրեցին Ամերիկա երթալէն առաջ Օքսֆորտի համալսարանին մէջ ունեցած իր բրոֆէսորի դիրքը կրկին ձեռք ձգել:

Ուէսլի պատասխանեց, «Իմ տեղս համալսարանը չէ ուր ես ոչ աթոռ ունիմ ոչ աշակերտ... Աստուծոյ խօսքը ինձ կը հրամայէ տգէտները լուսաւորել, չարերը դարձի բերել եւ առաքինի մարդիկը շինութեան առաջնորդել իմ կարողութեանս չափովը: Մարդիկ կ'ըսեն թէ այս բանը ուրիշի մը թեմին մէջ ընել սխալ է. ըսել կ'ուզեն թէ այս բանը ոչ մէկ տեղ ընելու իրաւունք

չունիմ (քանի որ ես սեփական թեմ չունիմ): Զո՞վ պարտիմ մտիկ ընել, զԱստուած թէ մարդիկ, դուք դատեցէք թէ առաւել մարդո՞ւ հնազանդելու եմ թէ Աստուծոյ: ԵՍ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ ԻԲՐ ԻՄ ԽԵՄՍ ԿԸ ՆԿԱՏԵՄ: Ասով ըսել կ'ուզեմ թէ աշխարհի որ մասին վրայ ալ գտնուիմ, կընկատեմ թէ իմ իրաւունքս ե խիստ պարտականութիւնս է փրկութեան բարի լուրը քարոզել բոլոր անոնց որոնք կը յօժարին ինծի մտիկ ընել:

Ժողովուրդին հետ եւ ժողովուրդէն (յաճախ խուժանի վերածուած) ստացած հալածանքի կամ ընդունելութեան նկարագրութիւնները գլխաւոր մասը կը կազմեն ճան Ուէսլիի բազմահատոր օրագրութեանց՝ որոնցմէ կը շարունակենք արտաբերել հոս.—

1741 Յունիս 14.— Մարքֆիլտ վերադարձանք: Եկեղեցին խուռներամ բազմութիւն կար եւ սաստիկ տաք ըլլալուն դժուարաւ կը կարդայի: Յետոյ իմանալով թէ շատեր տեղի չգոյութեան պատճառաւ դուրսը մնացած էին՝ անոնց քով գացի եւ Տէրոջը մեծ խոստումը անոնց քարոզեցի, «Անոնց ապստամբութիւնը պիտի բժշկեմ, զանոնք ձրիապէս պիտի սիրեմ» (Ովս. ԺԴ. 4):

Յուլիս 12.— Մինչ Չարլզ Սգուէրի հրապարակին վրայ կը քարոզէի այս համարին վրայ թէ ի՞նչ է «Իրաւունք ընել, ողորմութիւն սիրել ու խոնարհութիւնով Աստուծոյ հետ քայլել» Միք. 2, 8- յանկարծ մեծ աղմուկ մը բարձրացաւ: Խուժանէն շատեր եղ մը բերած էին եւ քրտնաթոր ճիզեր կ'ընէին զայն ունկնդիրներու բազմութեան վրայ քշել: Բայց անոնց ջանքերը ի դերեւ ելան, վասնզի հակառակ ամէն ճիզի եզը հոս ու հոն վազվոտիլէ յետոյ ուղղակի իրենց (խուժանին) մէջ մտաւ թողելով մեզ որ մեր Աստուածը փառաւորենք եւ Անով ուրախանանք:

Յունիս 5, 1759.— Պէթհի մէջ իր անկարգ կեանքովը եւ մանաւանդ իր շատակերութիւնովը նշանաւոր Նէշ անունով մարդ մը յայտարարած էր թէ հոն ինծի հակառակ պիտի կենար եւ շատեր աղաչեցին որ հոն չքարոզեմ, վախնալով գէշ հետեւանք մը: Այս հրատարակութիւնը (ռէքլամ) ինծի ունկնդիրներու աւելի մեծ բազմութիւն մը հաւաքած էր: Ես անոնց Աստուծոյ խօսքը քարոզելով ջանացի զանոնք մեղքի համար համոզել: Յանկարծ շատակեր ախոյեանը երեւցաւ եւ ջանաց զիս խիստ հարցաքննութեան մը անցնել. վերջապէս գոչեց, «Կ'ուզեմ զիտնալ թէ բոլոր այս մարդիկը ինչո՞ւ հաւաք-

ուած են հոս»։ «Տէր, թող տուէ՛ք որ ծեր կին մը պատասխանէ» գոչեց բազմութենէն ձայն մը։ «Դուն, Մը. Նէշ, քու մարմինիդ անունդին լաւ հոգ կը տանիս, մենք ալ մեր հոգիներուն հոգ կը տանինք եւ մեր հոգիները կերակրելու համար հոս եկած ենք»։ Մը. Նէշ առանց բառ մը արտասանելու անցաւ գնաց։

Սեպտ. 28.— Սկսայ Լոնտոնի մէջ Լեոնան վերայի քարոզը բացատրել։ Կէսօրէ ետք Քէնինկ-թընի մէջ հսկայ բազմութեան մը նկարագրեցի «Հոգւոյն մէջ Աստուծոյ կեանքը»։ Միայն մէկ հոգի որ բլուրին վերեւը կեցած էր ի սկզբան քիչ մը աղմուկ հանեց, բայց ինծի ծանօթ պարոն մը անոր քով գնաց եւ առանց բառ մը քսելու մեղմով անոր ձեռքէն բռնեց ու զայն վար իջեցուց, որուն վրայ մարդը հանգարտ մնաց մինչեւ որ մեկնեցաւ։

Երբ տուն եկայ, անհամար խուժան մը հաւաքուած գտայ դրան շուրջ որոնք զիս տեսածնուն պէս լիաթոք պոռայ սկսան։ Բարեկամներս ներս դրկեցի եւ ես ուղղակի խուժանին մէջը մտնելով աղաղակեցի «Տէր»ը անունը, ողորմած ու բարերար, չարութեան համար զղջացող»։ Անոնք կեցան եւ սկսան ապշած իրարու նայիլ։ Անոնց ըսի թէ այս մեծ Աստուծոյ երեսէն չեն կրնար փախչիլ եւ ուստի անոնց պաղատեցայ որ ամէնս միանանք եւ Անոր աղաղակենք ողորմութիւն խնդրելու։ Անոնք այս խնդրանքիս անմիջապէս յօժարեցան որմէ յետոյ ես աղօթեցի եւ զանոնք Աստուծոյ շնորհացը յանձնելով ներսը հաւատացեալներու պզտիկ խումբին գացի։

Մայիս 40, 1741.— Երկու օրէ ի վեր շատ անհանգիստ էի. հազով, գլխու եւ կոնակի ցաւով կը տառապէի, թէեւ կիրակին ալ կրցայ քարոզել, բայց այս երեկոյ մեղաւորները ապաշխարութեան կանչելէ յետոյ մեր սիրոյ խնձոյքի (ակափ) պահուն սաստիկ հագ մը գիս կ'արգիլէր խօսելէ։ Ճիշդ նոյն վայրկեանին զօրաւոր կերպով միտքս լեցուց սա խօսքը, «Այս նշանները անոնց հետ պիտի երթան» (Մարկ. ԺՁ. 17)։ Բարձրը ձայնով Յիսուսի կանչեցի որ «Իմ հաւատաւ»։ Երբ դեռ խօսքը բերանս էր, ցաւս անհետացաւ, շերմը թողուց զիս, մարմինս ուժը վերագարծաւ եւ շարաթներ ամբողջ ոչ տկարութիւն զգացի եւ ոչ ցաւ։ Քեզի ով Տէր, կը մատուցանեմ Իմ շնորհակալութիւններս։

Յուլիս 8.— Շատ յաճախ ինձ թելադրուած էր ճամբորդութեանցս ընթացքին ամէն հանդիպած մարդու հետ հոգեւոր խօսակցութիւն չու-

նենալ, հապա միայն անոնց հետ՝ որոնց հանդէպ սիրտս ազատութիւն եւ մղում կ'զգար ընելու։ Երկու օրէ ի վեր փորձեցի այս կերպը, հետեւանքը հետեւեալը եղաւ։ 1-80 մղոն տեղ ոչ մէկուն վկայեցի, ոչ իսկ ինծի հետ նոյն նստարանին վրայ նստող անձին։ 2. Այլեւս որեւէ խաչ չունէի կրելու կամ վերցնելու, եւ մէկ երկու ժամէն քունս տարաւ։ 3. Ամէն տեղ ինծի սկսան շատ յարգ ու պատիւ ընել։ ամէն մարդ զիս իբր քաղաքավար եւ բարի ազնուականի տեղ կը դնէր։ Ո՛հ, որքան հաճելի է այս միսին ու արիւնին։ Քրիստոնէութեան այս տեսակի նորահաւատներ ընելու համար «ծով ու ցամաք» պտըտելու ի՞նչ հարկ կայ։

ՄԱՆԿԱՆՅ ՍԻՒՆԱԿ

ՁԻԻՆԵՆ ԱԻԵԼԻ ՃԵՐՄԱԿ

.....

Պրանսայի հարուստիս արուարձաններէն մէկուն կայարանին հրապարակին վրայ տօնավաճառ մը սարքուած էր։ Աղմուկը խլացուցիչ էր, նոյնիսկ այդ աղմուկէն ձիերը կը խրտչէին։ Անցորդները այս նոր տեսարանէն հրապուրուած կը հաւաքուէին փայտաշէն տուններուն շուրջը. շատեր աւելի լաւ տեսնելու համար գիրար կը հրմշտկէին։

Մինակ քսան տարեկան աղջիկ մը, պարզ հագուած, հրապարակէն կ'անցնի, իբր թէ ոչ կը տեսնէ ոչ ալ բան մը կը լսէ։ Մատըլէն իր ուրիշ խորհուրդներովը այս հաճոյքներէն բոլորովին հեռու էր։ Ինք Յիսուսի կը պատկանէր եւ իր սիրտը այնքան ուրախ էր որ այս բաներով ինքզինքը զուարճացնելու պէտքը չունէր։ Բազմութեան արգելք չըլլալու համար փայտաշէն շարժական տուններուն հետեւէն կ'անցնի եւ ինքզինքը կը գտնէ այդ տուններուն մէկուն դիմացը, որուն աստիճաններէն մէկուն վրայ երկտասարդ կին մը նստեր էր։ Անոր շատ դեղնած դէմքը մեծ նեղութիւն մը կը յայտնէր։ Երկու պզտիկ աղջիկներ իր քովը կը խաղային եւ իրենց դիմագիծէն յայտնի էր որ Իտալացի էին։

Մատըլէն տեսնելով երիտասարդ կնոջ վերջին աստիճանի յօգնութիւնը, ժպիտով մը անոր մօտեցաւ ու հարցուց թէ արդեօք ծառայութիւն

մը կրնա՞ր ընել իրեն: Իտալուհին յուսահատած ձեռով մը շարժեց իր գլուխը ու իր նախուածքը ուղղեց երկու աղջիկներուն, այդ անուշ եւ հաստատակամ խօսքերուն առջեւ, մեր երիտասարդ բարեկամուհին որոշեց իր ցաւը վստահիլ օտար օրիորդին:

— Ա՛հ, Օրիորդ, ես շատ հիւանդ եմ, ամուսինս բժիշկ լերելու գնաց, թերեւս գիտ հիւանդանոց տանին, եւ ի՞նչ պիտի ընեն պզտիկներս, Վիքթորիան որ 9 տարեկան է, կրնայ տրամաբանել, բայց Անթուանէթ որ միայն եօթը տարեկան է այնքան դժուարահաճ է, երբեք չպիտի ուզէ որբանոց երթալ: Տիրամայրը զթա՛յ մեզի:

Մատըլէն շուտով որոշում կ'ընէ:

— Սիրելի Տիկին, իրաւէն կը հաւատամ որ Տէր Յիսուս գիտ ձեզի օգնելու համար զրկեց: Ձեր պզտիկները մինչեւ իրիկուն ինծի կը վստահի՞ք: Ահաւասիկ հասցէս: Ձեր ամուսինը ինծի զրկեցէք օտքերին որոշումը յայտնելու համար: Հիւանդը շնորհակալութիւն յայտնեց օրիորդին որ շուտով վստահութիւն ներշնչեց իրեն:

Երկու աղջիկները հնազանդելով իրենց նոր բարեկամուհին որ քիչ մը առաջ օտարական մըն էր, համբուրեցին իրենց մայրը ու զատուեցան:

Մատըլէն որբուհի մըն էր ու իր հօրաքրոջ հետ պարտէզով շրջապատուած գեղեցիկ տան մը մէջ կը բնակէր: Հօրաքրոր սիրով ընդունեց պզտիկները: Մեր պզտիկ օտարականները այս գեղեցիկ տան մէջ գտնուելով կը հիանային ամէն բանի վրայ: Ծաղիկներով լեցուն պարտէզին մէջ վազել ի՞նչ գեղեցիկ բան էր, յետոյ իրիկունը լաւ բազինք մը առնել, այս բոլորը նոր բաներ էին իրենց համար:

Այն նոյն իրիկունը աղջիկներուն հայրը տըխուր լուր մը բերաւ թէ իրենց մայրը հիւանդանոց տարուած ու անմիջապէս գործողութիւն եղած էր: Ինք յուսահատած էր, սակայն Մատըլէն եւ իր հօրաքրորը այնքան քաղցր վերաբերում մը ունեցան որ ինքն ալ սկսաւ վստահութիւն ունենալ ասոնց վրայ, ու երբ առաջարկեցին իրենց քով պահել պզտիկները մինչեւ մօր աղէկնալը, շատ սիրով ու շնորհակալութեամբ ընդունեց:

Յաջորդ օրերը այս խեղճ պզտիկներուն համար երջանիկ օրեր էին, որոնք ազմկալից կեանքէն զատ բան տեսած չէին: Առաջին իրիկունէն իսկ ընթրիքէն վերջ հօրաքրորը բերաւ մեծ Սբ. Գրքը ու սկսաւ կարդալ: Այդ սքանչելի պատմութիւնը որ միշտ նոր է, Տէր Յիսուսի ծնունդը

եւ անոր յարակից դէպքերը, այնքան կենդանի ու նոր էին այս պզտիկ հոգիներուն որ սկսան ազդուիլ արեւի պէս լոյսէն բացուող ծաղիկի մը նման: Ամէն իրիկուն ուրախութեամբ կուգային աղօթքի ժամանակ որ միշտ կը վերջանար պարզ աղօթքով մը իրենց ու իրենց մօրը առողջութեանը համար:

Մատըլէն շուտով հասկցաւ երկու քոյրերուն միջեւ եղած նկարագրի տարբերութիւնը: Անթուանէթ, որ երեւութով աւելի սիրուն էր, մեծ պակաս մը ունէր, սուտ խօսելու հակամէտ էր: Այս գէշ բնաւորութիւնը Մատըլէնը շատ կը վշտացնէր: Շատ անգամ քաղցրութեամբ փորձեց զգուշացնել ուղղելու այս պակասը, սակայն միշտ նոյն փորձութեան մէջ կ'իյնար:

Յիշատակելի իրիկուն մը Փրկչին մահը խորապէս ազդեց Վիքթորիայի սրտին որ դառնապէս լացաւ:

— Մտիկ ըրէ սիրելիս, մեզ մեր մեղքերէն փրկելու համար էր որ Յիսուս Իր մեծ սիրով ուզեց իր վրան առնել մեր արժանաւայել պատիժը: Կը տեսնե՞ս Վիքթորիա, չէինք կրնար երկինք երթալ եթէ Յիսուս մեր մեղքերը Իր վրան առած ու մեր պատիժը Ինք կրած չըլլար: Ձե՞ս խորհիր թէ ասանկ բարի Փրկիչ մը մեր բոլոր սիրոյն եւ մեր հնազանդութեան արժանի է: Վիքթորիա հեծկտանքով մը բացազանչեց, «Ո՛հ, անշուշտ կ'ուզեմ զինքը սիրել եւ Անոր հնազանդիլ մի՛շտ, միշտ»:

— Է՛հ, լաւ, կ'ուզե՞ս Իրեն ըսել այս «Այո»: Կը հաւատա՞ս որ Իր անդին արիւնը քու բոլոր մեղքերդ շնչած է: Յետոյ պզտիկին ձեռքերը իր ձեռքերուն մէջ առնելով Մատըլէն եռանդուն աղօթքով մը զայն Տէրոջը ներկայացուց: Յետոյ Վիքթորիա երկչոտութեամբ աւելցուց, «Շնորհակալ եմ ով Տէր Յիսուս, որ ինծի համար մեռար, կը հաւատամ որ բոլոր մեղքերս ներած ես: Ամէն»:

Այս մանկական աղօթքը որչա՛փ ուրախացուց երկինքի հրեշտակները: Հետեալ օրը Մատըլէն երկու պզտիկները հիւանդանոց առաջնորդեց: Իրենց մայրը որքան որ տակաւին շատ տկար էր, Վիքթորիա չկրցաւ զսպել ինքզինքը ու պատմեց իր սիրտը լեցնող մեծ ուրախութիւնը զոր ունեցած էր Յիսուսը իբր իր անձնական Փրկիչն ընդունած օրէն ի վեր: Հիւանդը ժպտեցաւ: Իրեն համար ի՞նչ բարերար խորհուրդ մըն էր գիտնալ թէ իր գաւազները ասանկ լաւ ձեռքի մը տակ կը գտնուին: Ու վիշտերն ու նեղութիւնները գոցուած ու քարացած այդ սրտէն

ներս կը թափանցէին կարծես աստուածային ուրույ առաջին լուսոյ ճառագայթները:

Հինգշաբթի կէսօրէ մը վերջ ծաղիկներու ցուցադրավայրը պիտի այցելէին: Նոյն առաւօտը մինչ պզտիկները իրենց դասի պարտականութիւնները կը ջանային լմնցնել, սպասուէին պահարանին մէջ գտնուած չորս կարկանդակներէն մէկ հատին աներեւութանալը յայտնեց: Անթուանէթ գլուխը տետրակին վրայ կախած սկսաւ կարմրիլ: Մատըլէն զայս նշմարելով սենեակը ձգեց ու գնաց Տէրոջմէն օգնութիւն խնդրելու այս դժուար պարագային համար: Վերադարձին հետեւեալ խոսակցութիւնը լսեց:

— Կը խնդրեմ, Նեթա, ըսէ Օրիորդին որ դուն առիթ կարկանդակը, եւ ան քեզի պիտի ներէ:

— Ես չառի կարկանդակը, հը, թերեւս կատուն կերած է:

— Օ', դուն գիտես որ կատուն կերած չէ: Որչա՛փ չար ես Նեթա, և Օրիորդը որ այնքան բարի է մեզի հանդէպ եւ Տէր Յիսուս որ մեռած է քեզի համար խաչին վրայ... Հոս ընդմիջուեցաւ երկու քոյրերուն խօսակցութիւնը, քանզի Մատըլէն ներս եկաւ խիստ դէմքով մը:

— Նեթա, ես տխուր եմ քեզ պատժել ստիպուելուն համար, բայց քու գէշ սովորութիւնդ զիս կ'ստիպէ ընել: Այս կէսօրէ վերջ փոխանակ պտոյտի երթալու դուն տունը պիտի կենաս, և կը յուսամ թէ պիտի հասկնաս թէ որքան սոսկալի է Աստուծոյ առջեւ մեղք գործել, թէ գողնալ եւ թէ սուտ խօսիլ:

Անթուանէթ արցունք մը իսկ չի հանեց ու շրթունքներն ալ ամուր մը զոցեց իր որոջման վրայ հաստատ կենալով:

Վիքթորիայի աչքերը արցունքով լեցուեցան, քակայն իր վիշտը ծածկելու համար դուրս ելաւ: Բայց յանկարծ խորհուրդ մը ունեցաւ զոր անպայման զործագրել ուզեց: Պիտի խնդրէր Անթուանէթի տեղը պատժուիլ: Այո, ինչպէս որ Տէր Յիսուս իր մեղքին պատիժը կրած էր, ինք ալ քրոջը արժանի պատիժը պիտի կրէր:

Մատըլէն շատ ազդուեցաւ, պզտիկին խորհուրդին մինչեւ խորը թափանցելով, ընդունեց անոր առաջարկը եւ իրը պատասխան գրկեց ու համրուրեց:

Գալով Նեթային, երեւութով առանց զգածուելու այդ եղած զոհողութենէն պատրաստուեցաւ երթալու:

Մատըլէն եւ անոր հօրաքոյրը անոր հետ այնպէս կը վարուէին, իբր թէ երբեք չանցաւոր չըլլար:

Յուցադրավայրը հասնելով, ուշի ուշով կը դիտէին հրաշալիքներ իրենց գոյներով, ձեւերով: Նեթա շատ անգամ զարմացական ճիչեր կը հանէր: Կանգ առին ճերմակութեամբ աչքի զարնող ծաղիկի մը թուփին առջեւ: Այս ծաղիկները ինծի կը յիշեցնեն Եսայի մարգարէին ըսած խօսքը «Եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս են, ձիւնի պէս պիտի ճերմկնան» ըսաւ Մատըլէն: Իր հօրաքոյրը, «Որքան լաւ է դիտնալ որ մեր Տէրոջ Յիսուսի թանկագին արիւնովը ճերմկեցան մեր սրտերը այս գեղեցիկ ձիւնապիտակ ծաղիկին նման»: Անթուանէթ իր աչքերը վերցուց Մատըլէնին, յետոյ անմիջապէս ճերմակ ծաղիկի թուփին: Ո՛հ, այն ատեն զարմանալի բան մը անցաւ այս դիմադիր պզտիկ սրտէն, բան մը որ նոյնիսկ ինք չէր կրնար բացատրել: Այլեւս այդ վայրկեանէն իր բերանը չբացաւ մինչեւ որ վերադարձան:

Վիքթորիա գիրենք դիմաւորեց ուրախ զուարթ դէմքով մը: Երբեք զոհողութիւն ընողի մը չէր նմաներ: Նեթա անոր վիզը փաթթուեցաւ ու զայն համըռուեց: Մատըլէն զանոնք առանձին թողուց մինչեւ ընթրիքի ատեն:

Երբ ճաշէն վերջ Ս. Գիւրքը սեղանին վրայ դրուեցաւ, Նեթա գլուխը կախած եւ երեսները կարմրած դէպի Մատըլէնը յառաջացաւ ու ըսաւ, «Ներէ ինծի, կարկանդակը ես առի, անգամ մըն ալ չպիտի ընեմ»: Մատըլէն խորապէս ազդուած զայն իր թեւերուն մէջ առաւ, բանալով Ս. Գիւրքը, անգամ մը եւս կարգաց մարգարէին խօսքը «Եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս են, ձիւնի պէս պիտի ճերմկնան»:

Առաջին անգամն էր որ Անթուանէթ ուշագրութեամբ մտիկ ըրած ու հապկած էր թէ փրկուելու պատգամը իրեն նման չար պզտիկ աղջկան մը համար ալ էր: Իր երկու ձեռքերը միացնելով շատ ցած ձայնով մը արտասանեց իր առաջին աղօթքը, «Ենորհակալ եմ ով Տէր Յիսուս, իմ սիրտս լուալուդ ու զայն այդ գեղեցիկ ծաղիկին նման ճերմկեցնելուդ համար: Ամէն»:

Թարգ. ՊՉՏԻԿՆԵՐՈՒ
ԲԱՐԵԿԱՍՏՈՒՅԻՆ

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St - Savournin Marseille

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շնորհամաիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիւ' (Վեր.) Բ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 13 45ին քարոզածողով, 13 R. Delille
15 30ին աղօթածողով, 11, Rue de l'Eclipse

8. 30 ին կիր. դաս մեծերու » »

Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ

Սէն Ժուլիէն եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ

Լէզ Օլիւ, Սէն Ժէրոմ, Ս. Միքի, Ալ, Պուլ

վար Օտո մասնաւոր բնակարաններու մէջ:

Շաբաթամիջի ժողովներ

Բ. շաբ. ժամը 2ին Սէն Ժուլիէն եւ,

Դ. շաբ. ժամը 2ին Սէն Ժուլիէն եւ Լէզ Օլիւ

Դ. շաբ. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse

Ե. շաբ. ժամը 20ին Սէն Ժէրոմ

Ուր. ժամը 20ին Camp Victor Hugo

Սէն Լուի.—Քարոզիչ Պատ. Վահան Սահակեան
Chapelle Evang. Arm. Bd. Escalon, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:

9. 30ին Ս. գրական ուսումնս.

16 ին քարոզածողով:

Սէն Թ. ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՌԹԱ.— Քարոզիչ Պատ. Ս. Պազգալեան
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով

Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

Սէն Փիլի.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՅՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ. Բրոֆ. Գ. Գ. Խալիկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս

եկեղեցիին մէջ

ՌՅՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ.—Հովիւ' Պատ. Ժ. Պարսումեան,

18, Rue du Dr. Rebatel

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,

5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՅՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

.....

ՍԷՆՔԻ ԷՔԻԷՆ.—Քարոզիչ Պատ. Ի. Աբրահամեան

2. Place de la Pareille:

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով

51 Rue de la République:

17ին աղօթածողով

Արմէ տիւ. Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻՋ.— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պուտաքեան,

10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 14 30ին քարոզածողով

37 Rue Tournefort Paris 5°

Metro Mouhe Aut. K

Ամսոյն Գ. կիրակին ժամը 16. 30ին ե.

Ք. Ը. երկսեռ միութեանց ժողովները

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulineaux

ԱԼՖՈՐՎԻԼ.— Քարոզիչ Պր. Մ. Վէֆիլեան

25 Rue Blanch, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville

Ժամը 4ին Կիր. դաս

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

1936ի «ԲԱՆԲԵՐ»-ի ՕՐԱՑՈՅՑԸ

Ուրախութեամբ կը ծանուցանենք «Բանբեր»ի ընթերցողներուն թէ այս տարի ալ մեզի կարելի եղաւ հրատարակել չորս տարիէ ի վեր շարունակ լոյս տեսնող «Հայ Ընտանիքին Օրացոյցը», որ ամէն կողմէ գնահատուած օգտաշատ ձեռնարկ մը եղած է: Ամէն կողմ «իրուած եւ հազար հինգ հարիւր բնակարաններու ճշմարիտ զարդը եղած է այն:

Այս օրացոյցը բոլոր ուրիշ Հայկական օրացոյցներէն տարբեր է,

Ա. Ունի շքեղ Ս. գրական պատկերներ ամէն մէկ ամսրւան համար, որոնք խիստ ներշնչող բնոյթ ունին: Անոնց մասին բացատրութիւններ եւ ներշնչումներ ալ տուած ենք իւրաքանչիւրին տակ:

Բ. Ունի ամէն օրուան համար կարճ խօսք մը Աստուծոյ պատգամէն, որ այդ օրուան մեր խորհրդածութեանց առանցքն ըլլալու կրնայ ծառայել:

Գ. Բոլոր կիր. դասի ուսուցիչներու եւ աշակերտաց համար անխուսափելի ընկեր մըն է այն, քանզի բոլոր կիր. դպրոցի դասերը ժամանակին ցոյց կուտայ,

Դ. Կիր. դպրոցի ոսկեղէն համարներն ալ ջանացած ենք այս տարի գետեղել կիրակիէն մէկ օր առաջ, շաբաթ օրուան քառակուսիին մէջ, այնպէս որ աշակերտներ գէթ մէկ օր առաջ կարենան խորհրդածել կիր. դասի մասին:

Ե. Ջանացած ենք այս տարի եւս շատ մը լուսաւորչական եղբայրներու եւ քոյրերու փափաքն ալ լեցնել, անոնց ներկայացնելով Հայ առաք. եկեղեցւոյ կարեւորագոյն տօնական օրերը:

Անոնք որ մեր օրացոյցը կը ճանչնան, արդէն ժամանակին կրնան ապսպրել եւ պիտի ապսպրեն, քանզի իրենց ընտանիքին անհրաժեշտ բարեկամը եղած է այն:

Ուրիշներ որոնք դեռ տեսած չեն եւ կ'ուզեն անկէ օգտուիլ, գրեն սեզի ղրկելով նաեւ անոր գինը որ է 7 ֆրք. կամ կէս տոլար:

Մեզի համար սրտի գոհունակութիւն մըն է եւ մեծ ուրախութիւն երբ կը յաջողինք այսպիսի օրհնութեան միջոց մը լոյս հանելու, այնպիսի ժամանակի մը մէջ երբ չարը կարծես բարձրագոյն իշխանութիւնը գրաւելու կ'սպառնայ:

Փառք Տէրոջը այս յաջողութեան համար: Կը մաղթենք որ անիկա մինչեւ հիմա եղածին պէս այս տարի ալ օրհնութիւն մը ըլլայ Ձեզի եւ Ձեր ընտանիքին:

Խմբ. «ԲԱՆԲԵՐ»-ի